№ 112 ՇԱԲԱԹ 25 ՄԱՅԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 25 ՄԱՅԻՍԻ № 112

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и Ко, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 ռուբլին, ձրիաբար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Վշտահար ծնողները ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին, որ մայիսի 26-ին, կիրակի, առաւօտեան ժամը 10-ին Խօջիվանքի գերեզմանատան եկեղեցում կը կատարվի ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ, Վերին-Ավլաբարում ողբերգական մահով մեռած իրանց անմոռանալի դստեր՝ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ

**ԾՈՎԻՆԱՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԵԱՆ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ**

մահվան քառասնօրեակի առիթով։ 425. 1—1

Արտիստակ. Ընկ. թատրոն
Երկուշաբթի մայիսի 27-ին
„Биржевыя Вѣдомости“ թղթակից
Ա. ՕԼԳԵՆԻՆԸ
Թիւրքահայաստանի հայկական վեց վիլայէթները ուսումնասիրելուց վերադառնալով կը կարդայ միայն մի դասախօսութիւն
ԱՆՀԵՏԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԸ
Դասախօսութեան ժամանակ ցոյց կը տրվեն մոգական լապտերով դասախօսի նկարած պատկերները։
ՏԵՂԵՐԻ ԳՆԵՐԸ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԵՆ։ ◆ ՍԿԻԶԲԸ Է ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 8½-ԻՆ։
Տոմսակները վաճառվում են Թատրոնի կասսայում առաւ. ժ. 10—2-ը և եր. ժ. 6—10-ը։
առ. 424. 2—1

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկ. դահլիճում
(Արաս-Արաշեան հրապ. № 7)
ԿԻՐԱԿԻ, մայիսի 26-ին, կը կայանայ
ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ-ԿԵՆՑԱՂԱԳՐԱԿԱՆ առաջին ՂԱՐԱԲԱՂՑԻԱԿԱՆ
ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԵՐԵԿՈՅԹ
I
«ՂԱՐԱԲԱՂԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔ» պատկեր։
II
Երեկոյթը բաց կանի պ. ԼԷՕՆ մի քանի խօսքով։
Գրական-երաժշտական բաժին արևելեան բնոյթով։
Մասնակցում են. օր. օր. Միլիօնչեան, Մ. և Շ. Մինասբէգեաններ, տիկ. ՑԱՍՄԻԿ, պ. պ. ՄԵԾ-ԳՐԻԳՈՐ (խմբով), յայտնի պարսկական երգիչ ՍԷԻԴ, Բալա, Տալեան, Բենիկ, Սարգարեան և ուրիշները։
Խնդրվում է հիւրերին ներկայ լինել Ղարաբաղի տարազով։
Անտրակտներին կը նուագէ ՄԵԾ-ԳՐԻԳՈՐԻ խումբը։ ◆ Վերջը ՊԱՐԵՐ։
Սկիզբն է երեկոյեան ժամը 8½-ին։
Տոմսերի գները 2 ռուբլուց մինչև 50 կ., աշակերտականը 40 կոպ.։
Տոմսակները կարելի է ձեռք բերել Կ. Հ. Բ. Ընկերութեան շինութեան մէջ։
Կարգադրիչ՝ Ս. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ
առ. 428. 2—1

ՂԱՐԱԲԱՂ եւ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐ
ՄՆԱՑՈՒՆ ՅՈՒՇԱՐՁԱՆ
Ղարաբաղի Թեմ. Դպրոցի 75-ամեակի
Օգոստոսին, Ղարաբաղի Թեմ. Դպրոցի 75-ամեայ յօբելեանին, լոյս կը տեսնի «ՏԱՐԱԶԻ» ալմանախ
ՂԱՐԱԲԱՂ եւ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐ
Չքեղ ու փառահեղ հրատարակութիւն։
ԿԸ ԲՈՎԱՆԴԱԿԷ
ամբողջ պատմական Ղարաբաղը վերջին XIX և ներկայ XX դարը մինչև մեր օրերը։
Այս փայլուն հանդէսը պիտի լինի սիրելի և անհրաժեշտ զարդ ու հրճուանք իւրաքանչիւր ղարաբաղցու համար։
Բաժանորդագինը մինչեւ յունիսի մէկը 2 ր., այնուհետեւ 3 ր.
ՄԵԼՕՎԻ ԹՂԹԻ ՎՐԱ 25 Ր.
Դիմել՝ Тифлисъ, БЮРО-ПЕЧАТИ: Головин. пр. 41.
Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում։
31. 10—1

ՆԿԱՐԻՉ
Ա. ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ԱՆԻԻ ԱԼԲՈՄԸ
գունատիպ
Լոյս տեսած Վիէննայի Գրաֆիշէ Քունստ Ինդուստրի Կայսերական Ընկերութեան տպարանում։
ԾԱԽՎՈՒՄ Է Թիֆլիսում. մեծաքանակ—Մաշինեանցի խանութում (Մադաթեան կղզի). իսկ հատով—«Բլան է Նուար» խանութում և «Գուտենբերգ» գրավաճառանոցում։
Գինը—հատով՝ 1 ր. 20 կ., մեծաքանակ գնողներին զեղջ 20%.
(Տ.Կ.) առ. 423. 25—2

ԲԺԻՇԿ
ՄԱԿԱՐԵԱՆՑԸ
Մայիսի 15-ից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը
ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ
Մասնագիտաբար—միզասեռական, վեներական, սիֆիլիս և կաշուի հիւանդութիւններ։
Հասցէն՝ Верхній Бульваръ, д. Зипаловой.
(օ.մ.) առ. 401. 20—3

ԲԺԻՇԿ
Յ. Մելիք-Նուբարեան
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐ
ԴԻԼԻՋԱՆՈՒՄ
ԲԱԴԱԼԵԱՆԻ ԱՄԱՌԱՆՈՑՈՒՄ
(Աթաբէգեանի ամարանոցի դիմաց)։
(25,30,5) առ. 746. 100—92

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Գ. Յ. ԳԱՐԱԿԻՒԼԵԱՆ
(Նախկին օգնական Կամայեվի)
Վերադառնալով արտասահմանից վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը
Ամէն օր՝ առաւօտեան ժ. 9—1½-ը և երեկ. ժ. 4—7-ը
Վելեամինօվսկայա փողոց № 4, բն. 3.
առ. (օ.մ.) 129. 50—39

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

### ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

22 և 23 մայիսի

Կ. Պոլիս.— Լրագրական տեղեկութիւնների համաձայն, անգլիական դեսպանը Բ. Դռնից պահանջել է ցրել Համիդիէ քիւրդական հեծելազօրը, որ արգելք է լինում Անատօլիայի բարենորոգումները գործադրելուն։ Բ. Դուռը խուսափողական պատասխան տուեց։

Հայոց պատրիարքը հեռագրեց Բիթլիսի առաջնորդին, որ Բ. Դուռը միջոցներ է ձեռք առել՝ վերջին ժամանակներս գործված սպանութիւնների յանցաւորներին պատժելու համար։

Բիթլիսից պատրիարքարանին հեռագրով տեղեկացնում են, որ ամբողջ վիլայէթում տիրում է անապահով վիճակ։

Ազդեցիկ հայկական շրջաններում յայտնում են, որ պատրիարքարանը Հայաստանի դրութիւնը աւելի վատթարանալու դէպքում կայացնելու է կարևոր վճիռներ և դիմելու է հայ ազգին մի կոչով, որպէսզի նա պաշտպանվի՝ ինչպէս կարող է։

—

Բեռլին.—Ժընեվից լրագիրներին տեղեկացնում են, որ բալկանեան պատերազմից առաջ ականաւոր հասարակական գործիչների կազմած հայկական «Պրօ-Արմենիա» կոմիտէտը մեծ պետութիւնների կառավարութիւններին ուղարկել է մի հաշուետւութիւն, որի մէջ պարունակվում են գործնական առաջարկութիւններ հայկական հարցի լուծման վերաբերեալ։ Լուրերի համաձայն, գերմանական կառավարութիւնը խոստացել է կոմիտէտին իր աջակցութիւնը։

—

Կ. Պոլսից հեռագրում են. «Հայոց ազգային ժողովի բացման նախօրեակին հայկական կոմիտէտի նիստում որոշվեց առաջարկել պատրիարք Արշարունուն և ազգային ժողովին հրաժարական տալ, ի նկատի ունենալով որ կառավարութիւնը շարունակում է հայերի վերաբերութեամբ Աբդիւլ-Համիդի քաղաքականութիւնը։ Ազգային ժողովի «Դաշնակցութիւն» և սահմանադիր-ռամկավար կուսակցութիւնների ներկայացուցիչները կրակոտ ճառեր արտասանեցին մեծ վէզիր Մահմուդ-Շէվքէթ-փաշայի դէմ և նրան անուանեցին գաւառական բռնակալների հովանաւորող»։

—

Լօնդօնից հեռագրում են. «Անգլօ-թիւրքական համաձայնութեան ամենագլխաւոր յօդուածները կայանում են նրանում, որ Անգլիան ապահովում է Թիւրքիայի անձեռնմխելիութիւնը 40 տարով, պարտաւորվելով թեթևացնել ֆինանսական դժուարութիւնները պատերազմից յետոյ և պաշտպանել կղզիների հարցում, որի փոխարէն ստանում է գործողութեան ազատութիւն Կօվէյտում, նպաստում է Հայաստանի, Սիրիայի և Միջագետքի բարենորոգումներին»,

—

«Земщина» թերթում մի թունալի յօդուած է տպված ոմն Ե. Սկուբիխինի ստորագրութեամբ «Հայաստանի աւտօնօմիան անթոյլատրելի է» վերնագրով, որի մէջ յօդուածագիրն այն եզրակացութիւնն է անում, թէ Հայաստանի աւտօնօմիան անպայման վնասակար է Ռուսաստանի համար։

Այդ յօդուածը արտատպված է տեղական «Гол. Кавказъ»-ի մայիսի 23-ի համարում։

—

«Н. Вр.»-ն իր առաջնորդող յօդուածում գրում է. «Հայկական հարցի էութիւնը ներկայ րոպէում կայանում է ոչ թէ նրանում, որ 3 շաբաթվայ ընթացքում տեղի ունեցան 70 բռնաբարութիւններ ու սպանութիւններ, այլ նրանում, որ մեզ հաւատակից քրիստոնեաների անձնական ազատութեան դէմ կատարվող այդ բռնութիւնները տեղի են ունենում կենտրոնական կառավարութեան գիտութեամբ ու հաճութեամբ։ Այդօրինակ պայմաններում, երբ ափ-աշխարա պարզ է քիւրդ աւազակների և երիտ.-թիւրքերի դաշնակցութիւնը, այսինքն այն երիտասարդ-թիւրքերի, որոնք սոսկ բռնութիւնների մէջ են տեսնում երկիր կառավարելու եղանակը, Եւրոպայի պարտականութիւնը ինքնին մէջտեղ է գալիս. իսկ եթէ Եւրոպան չի ցանկանայ պնդել այն բարենորոգումների գործադրութեան վրա, որոնք խոստացված էին տակաւին Բեռլինի դաշնագրով, այն ժամանակ ղեկավարութիւնը պէտք է անցնի Ռուսաստանին։ Վամպի չի կարելի մոռանալ այն հասարակ իրողութիւնը, որ ոչ-թիւրքահայ ազգաբնակութեան ճնշող մեծամասնութիւնը ապրում է կամ ռուսական երկրում կամ Հիւսիսային Պարսկաստանում, որ գտնվում է մեր ազդեցութեան անմիջական շրջանի ներքոյ։ Այդ հանգամանքը մեզ վրա յատուկ պարտականութիւն է դնում հայկական հարցի վերաբերմամբ»։

—

«Бирж. Вѣд.»-ի թղթակից Օլգենինը հեռագրել է Սղերդի սանջակից, թէ քրիստոնեայ ազգաբնակութիւնը գտնվում է սոսկալի դրութեան մէջ։ Ճնշվածների միակ յոյսը ռուսների օգնութեան վրա է։

### ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

—

«Бирж. Вѣд.»-ի թղթակից Օլգենինը.—Դաշնակցական «փաշաների» կոպիտ վերաբերմունքը նրա հանդէպ.—Շէֆերն իրանց էշն են քշում.—Հին վէրքը.—«Հայոց ազգը» հայոց ազգի դէմ

Երզրում, 17 մայիսի

«Бирж. Вѣд.»-ի թղթակից Տ. Օլգենինը մի շաբաթ Երզրում մնալուց յետոյ մեկնեց Կովկաս։ Նրա գլխաւոր քաղաքներում նա մտադիր է ռեֆերատներ կարդալ Թիւրքահայաստանում կատարած ճանապարհորդութիւնների մասին, և նոյնիսկ մտադիր է առանձին հատորով իր ուսումնասիրութիւնները հրատարակել, եթէ հնարաւորութիւն գտնի։

Նախորդ նամակով գրել էի, թէ Օլգենինը Երզրումում ինչպիսի ցուրտ ու կոպիտ վերաբերմունքի հանդիպեց 3—4 դաշնակցական շէֆերի կողմից։ Բոլոր վայրերում Օլգենինը հանդիպել էր դաշնակցականների ջերմ համակրութեան, բոլոր վայրերում թէ հայ ժողովրդի և թէ դաշնակցականների մէջ նա գտել էր շատ որոշ և սիրալիր տրամադրութիւն դէպի Ռուսաստանը, և հայկական հարցը ռուսական տիրապետութեան միջոցով լուծելու հաւատքը։ Այդ տրամադրութիւնը Երզրումի վիլայէթի հայ ազգաբնակութեան մէջ և տեղիս դաշնակցական շարքերում աւելի ևս է շեշտված։ Թիւրքերը նախազգում են ռուսական գրաւումը և նոյնիսկ կան այդ ուղղութեան համամիտներ։

Թիւրքահայերը իրանց հարցի լուծման որպէս ամենահաւանական և ազգային տեսակէտով օգտակար են համարում ռուսական տիրապետութիւնը։ Դա փաստ է։ Բայց այդ երկու ջուխտ ու մի կէնտ մարդիկը փչքացրվում են իրանց ամբողջ մարմնով, և ահա նորից է սկսում ագիտացիա։ «Հայոց ազգը» սկսում է քարոզել հայոց ազգին, թէ հայ ազգը աւելի գերիշխող դիրք ունի Թիւրքիայում, քան մի որևէ տեղ։

Պէտք է գիտենալ, որ այս և նման քարոզների վերջին խօսքերը շատ դուր են գալիս երիտասարդ-թիւրքերին, որովհետև նրանց հացին մեղր ու կարագ է քսվում։ Ու միամիտ այդ թիւրքերը դաշնակցականների հետ խօսելիս շատ յաճախ ասել են.

— Ի հարկէ, սիրելի հայրենակիցներ, շատ ճիշդ էք խօսում. Ռուսաստանը բռնակալ է, հայերին թշնամի, ինչպէս նաև մեզ թշնամի. մենք վստահ ենք հայերի անձնուիրութեան վրա։

Ի լուր այս ցնծարանութիւնների արդեօք վիճակվե՞լ է դաշնակցականներին ըմբռնել թէ «սօցիալիստական» կուսակցութեան տակտիկան իմպերիալիստների հետ եղբայրանալու չափ առաջ է գնացել։ Գուցէ այդ էլ բացատրեն «բանւոր դասակարգի շահերի տեսակէտից»։ Վիճակվե՞լ է արդեօք դաշնակցականներին գիտակցել, թէ իրանք ի՞նչ են նուագում ու դիմացինը ի՞նչ պար գալիս։

Բացի Դաշնակցութեան եկւոր շէֆերից՝ ռուսական տիրապետութեան հակառակ են նաև այն մի քանի անհատները, որոնք «Նոր» Թիւրքիայում սահել են իրանց համար փափուկ դիրք ու պաշտօն՝ թէ որպէս պարլամենտի անդամ և թէ որպէս հաւանական թեկնածու մինիստրական աթոռների։

Բացարձակապէս կարելի է յայտարարել, որ այդ մարդկանց գաղափարը ծայրից ի ծայր տարբերվում է հայ ժողովրդի (բոլոր դասակարգերի) տրամադրութիւնից։ Այդ կարելի է հաստատել շատ փաստերով։ Վերջին 3 ամսվայ ընթացքում, օտար թղթակիցներ բազմաթիւ խօսակցութիւններ ունեցան այլ վայրերի դաշնակցական աչքի ընկնող գործիչների հետ, և բոլորն էլ համամիտ են գտնվել ռուսական տիրապետութեան։ Հէնց Երզրումում, մի քանի ամիս առաջ, ճանապարհորդ մի դաշնակցական շատ յարգված գործիչ բացարձակապէս նոյնպիսի յայտարարութիւններ արեց մի պաշտօնական անձնաւորութեան։ Նոյնպիսի յայտարարութիւն ստացել է ռուս թղթակից Մաշկովը Պոլսի դաշնակցական գործիչներից։

Մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ դաշնակցական շէֆերի մէջ ինչպէս միշտ, այժմ էլ պակասում է համաձայնութիւնը։ Իւրաքանչիւր շէֆ իր գտնված տեղի գործերի կտրողն ու կապողն է։

Թիւրքահայերը դէմ չեն և ցանկանում են ռուսական տիրապետութեան. բայց դէսից-դէնից եկած՝ ոչ-թիւրքահայ մի քանի անհատներ, միշտ յանուն հայ ազգի, «առաջ են քշում իրանց էշը»։ Իսկ դա՝ փայփայում է թիւրքերի ինքնասիրութիւնը։

Թիւրքահայերը իրանք ինքնուրոյնօրէն պէտք է արտայայտվեն իրանց վիճակի և ցանկութիւնների վերաբերմամբ։ Ոչ-թիւրքահայ անհատները իրաւունք չունեն կեղծել թիւրքահայ ժողովրդի կամքն ու ցանկութիւնը իրանց քէֆի ուզածի նման։ Դա հին վէրք է և տակաւին չը բուժվեց։ Թիւրքահայի համար կարևոր է պատւի, գոյքի և կեանքի ապահովութիւն, իսկ այդ՝ ռուսական տիրապետութիւնը կարող է տալ շատ աւելի լաւ, քան որևէ միջազգային կոնտրօլ, կամ ինքնավարութիւն և այլն։

Ջանադան անձեր կարող են իրանց «սօցիալիստական» գաղափարներից դրդված հակառակել ռուս պետական կարգերին, բայց թիւրքահայ ժողովրդի ներկայ իրականութեան մէջ ոչ ոք չէ փնտռում սօցիալիստական նկատումներ, այլ կեանքի ֆիզիքական գոյութեան տարրական պայմաններ։ Իսկ դա լիովին և շատ բաւարար կերպով կը տայ Ռուսաստանը։ Կովկասահայի վիճակը թիւրքահայի նախանձն իսկ գրգռում է։

Կուսակցականների կողմից վերանորոգված մի տեսակ համակրանքի ծեքծեքումները երիտասարդ թիւրքերի հանդէպ՝ ունեն մի նպատակ,—առաջիկայ պարլամենտական ընտրութիւններում ապահովել պարլամենտական աթոռներ «հայոց ազգի» անդամների համար։

Դաշնակցական «փաշաները» նոյն իսկ չը խղճահարվեցին զրպարտել Օլգենինին որպէս զինուորական լրտեսի և որպէս պրօվօկատորի, գրգռողի քիւրդերին հայերի դէմ։ Այդ «ինտելիգենտ փըրկիչները» Օլգենինի յօդուածները կարդալիս միթէ չը զգացին, որ նրանց գրողը ունեցած լինելու է հայ սրտի չափ մի տաք սիրտ, ցաւակից դէպի «անհետացող Հայաստանը» ու անկեղծօրէն բողոքող նրա դահիճների դէմ։ Մաքուր հոգի կրող այդ մարդը խաչ հանվեց «արդարութեան զինուորեալ պաշտպանների» ձեռքով։

Քալմ

### ՌՈՒՍԱՑ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ

—

Չորեքշաբթի, մայիսի 22-ին, երեկոյեան ժամը 8-ին, փոխարքայի խորհրդի դահլիճում կայացաւ Ռուսաց Կայսերական Աշխարհագրական Ընկերութեան կովկասեան ճիւղի նիստը, նախագահութեամբ փոխարքայի օգնական սենատոր Վասալի։

Սկզբում կարդացվեցին կովկասեան ճիւղի 1912 թ. գործունէութեան տեղեկագիրը, հաշիւը և 1913 թ. նախահաշիւը, որոնք և հաստատվեցին։

Ապա Ալ. Քալանթար կարդաց իր զեկուցումը «Արևելեան Անատօլիայի տնտեսական հեռանկարների մասին», որի ամփոփումը հետևեալն է.

Ալ. Քալանթարի զեկուցումը վերաբերում էր Արևելեան Անատօլիայի տնտեսական վիճակին և այն հեռանկարներին, որ կարելի է ունենալ ապագայում, երբ զարգացած կը լինի երկրի մէջ կուլտուրական կեանքը։

Զեկուցանողը նկարագրեց երկրի բնական հարստութիւնները, թէ հանքաբանական և թէ արդիւնաբերական, ներկայացրեց արհեստի և առևտրի դրութիւնը և յայտնեց մի շարք խորհրդածութիւններ այն միջոցների մասին, որոնցով կարելի է բարւոքել տեղական տնտեսութիւնը։

Զեկուցման ընթերցանութիւնը պահանջեց աւելի քան մի ժամ, թէև բաց էր թողնված նիւթի մի մասը, որ վերաբերում էր մանրամասնութիւններին և վիճակագրական թւերին։

Նկարագրութիւնը պարզեց, որ Թիւրքահայաստանը ամենաբարեբեր և արդիւնաշահ վայրերից մէկն է մեր երկրագնդի վրա։

Այդ երկիրը կարող է երկար տարիներ առատ նիւթ մատակարարել միջազգային վաճառանոցներին, եթէ դրված լինի զարգացման կանոնաւոր ուղիների վրա։

Շնորհիւ հաղորդակցութեան ճանապարհների բացակայութեան՝ երկրի արդիւնքները հնարաւորութիւն չունեն արտահանվելու։

Շնորհիւ կապիտալների և կրեդիտի պակասութեան՝ միջոցներ չը կան ընդարձակ արդիւնագործական ձեռնարկութիւններ կազմակերպելու։

Շնորհիւ քաղաքացիական կեանքի անապահով վիճակի, որը երաշխաւորէր անձի և գոյքի անձեռնմխելիութիւնը, տնտեսական կեանքի տարրերը ճնշված դրութեան մէջ են գտնվել և չեն կարողացել իրանց բեղմնաւոր ոյժը արտայայտել։

Զեկուցանողը ընդգծում է Թիւրքահայաստանի տնտեսական զարգացման հիմնական մեծ նշանակութիւնը և կոչ է անում առանձին ուշադրութիւն նուիրել այդ երկրի բարգաւաճման նպաստող խնդիրներին։

Տասը րոպէ ընդմիջումից յետոյ Հ. Առաքելեան կարդաց իր զեկուցումը «Հայ ազգաբնակութեան վիճակագրութիւնը Փոքր-Ասիայում» վերնագրով։ Այդ զեկուցման ամփոփումը հետևեալն է.

Ինչպէս Ռուսաց Աշխարհ. Ընկեր., նոյնպէս և այլ անձինք կազմել են զանազան ժամանակներ Թիւրքիայի հայ ժողովրդի վիճակագրութիւնը, սակայն այդ վիճակագրութիւնը հիմնած են եղել Թիւրքաց կառավարութեան տարեկան սալնամէների վրա, որոնք կազմված են տենդենցիօզ կերպով։ Թիւրքաց կառավարութիւնը Բերլինի դաշնագրից յետոյ, որպէսզի կարողանայ խոյս տալ հայաբնակ նահանգների մէջ րէֆորմներ մտցնելու պարտականութիւնից, աշխատել է միշտ հայերի թիւը թէ Արևելեան Անատոլիայի 6 վիլայէթներում և թէ առհասարակ Փոքր-Ասիայում քիչ ցոյց տալ, ապացուցանելու համար թէ հայերը կազմում են փոքրամասնութիւն ամեն տեղ՝. հազիւ 20—25%։ Այդ նպատակին հասնելու համար նա գործ է դրել զանազան միջոցներ, որ զեկուցանողը մի առ մի թւեց։

Որովհետև ներկայումս հայկական հարցը արդիական է դարձել, և այս խնդիրը, թէ որքան է հայերի թիւը թէ հայկական 6 վիլայէթներում և թէ Փոքր-Ասիայում, կարևորութիւն է ստանում, ուստի զեկուցանողը աշխատել է թիւրքական, եւրոպական և հայկական աղբիւրների հիման վրա կազմել մի վիճակագրութիւն, որ եթէ ոչ բոլորովին ճշգրիտ, գէթ ճշմարտութեան մօտ լինի։

Թիւրքիայի հայ ժողովրդի առաջին վիճակագրութիւնը եղել է կառավարութեան ձեռքով 1844 թ.։ Այդ վիճակագրութիւնը հիմք բռնելով, ֆրանսիացի հեղինակ Ubicini 1854-ին որոշել է հայերի թիւը 2.400,000, որից 400,000-ը եւրոպական, իսկ 2 միլիօնը Ասիական Թիւրքիայում, որի մէջ այն ժամանակ մտնում էին և յետագայում Ռուսաստանին անցած երկրները (Կարս և այլն)։

Ապա 1878-ին, երբ ծագեց հայկական հարցը, Ներսէս պատրիարքը կազմել տուեց մի նոր վիճակագրութիւն, որ ներկայացրեց Բերլինի կօնգրէսին։ Համաձայն այդ վիճակագրութեան հայերի թիւը հայկական 6 վիլայէթներում (Վան, Բիթլիս, Դիարբէքիր, Էրզրում, Խարբերդ և Սըվազ) հաշւված է 1.630,000, Փոքր-Ասիայի միւս 8 վիլայէթներում 835,000, իսկ Եւրոպական Թիւրքիայում (Կ. Պոլիս և այլն) 195,000, այնպէս որ ամբողջ Թիւրքիայում Ներսէս պատրիարքը ցոյց է տուել 2.660,000 հայ, իսկ ընդհանուր առմամբ 3 միլիօն, որովհետև հիմք կար կարծելու, որ այդ թիւը նուազեցված է հէնց իրանց հայերի ձեռքով, որոնք խարաջ հարկից ազատվելու համար աշխատում էին նոյնիսկ առաջնորդարաններից ծածկել իրանց իսկական թիւը։

Այդ վիճակագրութիւնից յետոյ 1892 թ. կազմվել է ֆրանսիացի Վիտալ Կինէյի վիճակագրութիւնը՝ Թիւրքական սալնամէների հիման վրա։ Համաձայն այդ վիճակագրութեան՝ հայերի թիւը հայկական 6 վիլայէթներում հաշւված է 666,435, Փոքր-Ասիայի միւս վիլայէթներում՝ 448,576, ուրեմն ամբողջ Փոքր-Ասիայում՝ 1.115,011 հայ։

Սակայն ֆրանսիական կառավարութեան հրատարակած Դեղին գիրքը հաշւում է հայերի թիւը 1.475,011, հաշւելով և Եւրոպական Թիւրքիայի (Կ. Պոլիս և այլն) հայերին։

Այս 1913 թ. գերմանացի գիտնական դոկտոր Լէպսիուսը, հիմնվելով Կինէի վիճակագրութեան վրա, հրատարակել է մի նոր վիճակագրութիւն, որտեղ ամբողջ Ասիական Թիւրքիայում հայերի թիւը հաշւվում է 1.181,066, որից հայ-լուսաւորչական՝ 995,479, հայ-կաթոլիկ՝ 89,746, հայ-բողոքական՝ 95,841։

Սակայն կայ և մի այլ՝ աւելի կարևոր վիճակագրութիւն. դա նախկին պատրիարք Օրմանեան արքեպիսկոպոսի կազմած վիճակագրութիւնն է, որ նա հրատարակել է 1911 թ.։ Այդ վիճակագրութեան համաձայն՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքի իրաւասութեան ներքոյ գտնվում են 72 թեմեր, որոնցից Ասիական Թիւրքիայում՝ 44 թեմ, Սիրիայում՝ 4, Կիլիկիայում՝ 15, Եւրոպական Թիւրքիայում՝ 4, ուրեմն Թիւրքաց պետութեան մէջ 67 թեմ, իսկ 5 թեմ ևս այդ պետութիւնից դուրս՝ Բօլգարիա, Ռումինիա, Կրետէ, Եգիպտոս և Յունաստան։ Արդ՝ ամբողջ Փոքր-Ասիայում հայերի թիւը ցոյց է տրված այսպէս. 1) 1.535,000 լուսաւորչական հայ, 2) 73,500 կաթոլիկ և 3) 40,500 բողոքական, իսկ Եւրոպական Թիւրքիայում (Կ. Պոլիս և շրջակաները) 185,000 լուսաւորչական, 10,000 կաթոլիկ և 1000 բողոքական։ Ուրեմն բոլոր հայերի թիւը Թիւրքաց պետութեան 67 թեմերի մէջ է 1.845,000, որից լուսաւորչական՝ 1.720,000, կաթոլիկ՝ 83,500 և բողոքական՝ 41,500։

Վերջին վիճակագրութիւնը կազմվել է անցեալ 1912 թ. պատրիարքարանի ձեռքով։ Համեմատ այդ վիճակագրութեան՝ հայերի թիւը Արևելեան Անատոլիայի 6 վիլայէթներում հաշւված է 1.018,000 կամ 37% ամբողջ ազգաբնակութեան, որ հաշւված է 2.615,000։

Զեկուցումներից յետոյ եղաւ մտքերի փոխանակութիւն. խօսեցին պ.պ. Յ. Սոլովեան, Եւանգուլով, Քալանթար։

Վերջում նախագահ սենատոր Վասացին, ամփոփելով վիճաբանութիւնները, շնորհակալութիւն յայտնեց զեկուցանողներին։

### ՀԱՅԵՐԸ ԵՒ ՔԻՒՐԴԵՐԸ

(Թղթակցութիւն անգլ. «Նիըր Իսթ» թերթի)

Կ. Պոլիս, 9 մայիս

Վերջին շաբթուս Փոքր-Ասիոյ մէջ իրերու վիճակը դէպի լաւը կամ դէպի գէշը տանող բան մը չպատահեցաւ։ Տեղի ունեցան սովորական ժամանակի սպանութիւններ հայերու՝ քիւրդ աւազակներու կողմէն։ Հայոց ազգ. և խառն ժողովները կը պատրաստուէին վերջին կոչ մը ուղղելու կառավարութեան։ Սակայն յոռետեսութեան նշաններ կան հայերու մէջ։ Զգացում մը կայ հետևելու թիւրքական առածի՝ «Լաֆ իլէ փիլաֆ փիշմէզ», որ հետզհետէ ընդունելութիւն կը գտնէ շատ մը հայերու քով։

...Պատրիարքարանը կը պնդէ որ եւրոպական վերահսկողութիւն հաստատուի այն բարեկարգութեանց վրայ, զորս կը ծրագրէ թիւրք կառավարութիւնը. այս է միակ միջոցը Անատոլուի կացութիւնը փրկելու։ Կօմիտէին մարդոց լաւագոյնները համամիտ են ասոր. բայց կը մնայ տեսնել թէ՝ արդեօք եւրոպացի քննիչներուն և ընդհանուր քննիչներուն իրական իշխանութիւն պիտի տրուի՞ բարեկարգելու. թէ՞ եթէ նոյն իսկ այդ իշխանութիւնը տրուի, ինտրիգներու ենթակայ պիտի չըլլա՞ն անոնք, ինչպէս եղաւ ծովակալ Կէմբըլ փաշա։ Ցաւալի է թէ՝ հայերը, որոնց մէկ ամենամեծ մասը լաւ օսմանցի է և կը փափագի խաղաղութեամբ ապրիլ թիւրք դրացիներուն հետ, հետամտելով հանդերձ իր օրինաւոր պահանջներուն պաշտպանութիւնը, հեռու պիտի կենայ այն գործերէն, զորս կրնան ներշնչել, ոչ անշուշտ այն Դաշնակցութիւն ընկերութիւնը, որ այժմ չափաւորիչ ազդեցութիւն մը կը գործադրէ, այլ այն նախկին դաշնակցականները եւ Հնչակեանները, որոնք եղած են զուտ անիշխանականներ։ Փոքր-Ասիոյ մէջ օտար խնդիրներու և օտար գործակալներու գործունէութեան գրոյցներ տարածուած են հոս։ Եւ կոմիտէի շրջաններուն մէջ կը խօսուի ռուսական աժան պրօվօկատօրներու մասին, թէև «Թանին», անպատասխանի համարձակութեամբ, կըսէ, թէ Կիլիկիոյ մէջ վերջերս կատարածի մասին շրջած շշուկները Բաղդադի երկաթուղիի գերմանացի բանուորներու և ուրիշ պաշտօնեաներու միջոցով տարածուած են։ Բայց եթէ Քիւրդիստանը և Կիլիկիան լաւ կառավարուէին, արտաքին ինտրիգներու խնդիր չէր կրնար ըլլալ։ Ո՞վ երբեք լսած է, թէ արտաքին ինտրիգներ ըլլան Գալլէսի և կամ Ֆրանսախօս Զուիցերիոյ մէջ։

(«Ազատամ.»)

## ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

22 և 23 մայիսի

Պարիզ.—Պիշօնի նախագահութեամբ արտաքին գործերի մինիստրութեան մէջ բացվեց բալկանեան գործերի ֆինանսական մասնաժողովը։ Ողջունելով կառավարութեան անունից պատգամաւորներին, Պիշօնը ճառ արտասանեց և յոյս յայտնեց, որ մասնաժողովը իր ընդգծած խնդիրը կը լուծէ արդարութեամբ ու անկողմնապահութեամբ։

Գերմանական դեսպանատան խորհրդատու բարոն ֆօն-Լանկէնը իբրև աւագագոյն անդամ շնորհակալութիւն յայտնեց պատգամաւորների անունից և առաջարկեց պատուաւոր նախագահ ընտրել Պիշօնին, իսկ իսկական նախագահ ֆրանսիացի Միէժէրին։ Առաջարկութիւնը ընդունվեց միաձայն։ Թիւրք պատգամաւոր Նաիլ-բէյը շնորհակալութիւն յայտնեց Ֆրանսիայի կառավարութեանը ընդունելութեան համար և ասաց, որ Թիւրքիան կամենալով շարունակել իր գոյութիւնը միւս պետութիւնների մէջ, հաւատացած է, որ կը գտնէ բարեհաճ աջակցութիւն մեծ պետութիւնների կողմից։

Դաշնակիցների կողմից շնորհակալ եղաւ Վէսնիչը, որ մատնանշեց՝ թէ դաշնակիցները պատերազմեցին քրիստոնեայ ժողովուրդների ազատագրութեան և կորցրած շրջանները վերադարձնելու համար։ Ուրիշ ազգերի իրաւունքները յարգել—ահա թէ ինչը պէտք է հաստատ հիմք ծառայէ միջազգային յարաբերութիւնների համար։

Առաջին նիստը նշանակված է յունիսի 9-ին։

Նիստից յետոյ պատգամաւորներին թէյ տրվեց։

### ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

22 և 23 մայիսի

Լօնդօն.—Րէյտէրի տեղեկութիւններին համաձայն, հաշտութեան վեհաժողովի երէկվայ նիստում Յունաստանի ներկայացուցիչները բացակայ էին, չը ստանալով թիւրքերից պահանջած վաւերացումները։ Նիստը տևեց երկու ժամից աւելի և կրում էր սրտագին բնաւորութիւն։ Համաձայնութիւն կայացաւ արձանագրութեան հարցի մասին։ Յոյն պատգամաւորների բացակայութեան պատճառով վերջնական քննութիւն Յունաստանին վերաբերող հարցերի առիթով չը կայացաւ։ Ուրբաթ օրը տեղի է ունենալու վեհաժողովի վերջին նիստը։ Շաբաթ Թագաւորը Բուկինհեմի պալատում նախաճաշ կը տայ ի պատիւ հաշտութեան վեհաժողովի։ Յունաստանի և միւս երկրների լիազօրները մտադիր են հեռանալ Լօնդօնից եկող շաբաթվայ սկզբին։

Վալօնա.—Կայացաւ բողոքի միտինգ Չիամերիան Յունաստանին միացնելու դէմ։

Բելգրադ. — «Պօլիտիկա» լրագիրը յայտնում է, որ սերբ կառավարութիւնը առաջարկեց դաշնակից տէրութիւնների պրեմիէրներին գումարվել մայիսի 26-ին Սալօնիկում։ Յունաստանը և Չեռնօգորիան արդէն համաձայնել են։

Մի տարով արգելվեց Սերբիայում ստանալ աւստրիական «Նէյէ-Ֆրէյէ-Պրեսսէ» լրագիրը։

### ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

22 և 23 մայիսի

Ռոստով.—Առ. ժամը 10-ին Թագաւոր Կայսրը Օգոստափառ Ընտանիքով բարեհաճեց ժամանել Ռոստով։

Մոսկվա. — Մայրաքաղաքը շքեղ պատրաստութիւններ է տեսնում Նորին Մեծութիւններին ընդունելու համար։

Պարիզ.—Նախկին մինիստր-նախագահ Բրիանի աւտօմօբիլը ընդհարվեց ապրանքատար աւտօմօբիլի հետ։ Բրիանի թիակը կոտրվեց։

Բերլին. — Հեղինակաւոր աղբիւրից հաղորդվում է, որ Վիլհէլմ կայսրի Ստոկհօլմ մեկնելուց առաջ յունիսի 21-ին Կիլում տեղի կունենայ նրա և իտալական Թագաւորական զոյգի տեսակցութիւնը։

Պարիզ.—Պատգամաւորների պալատ։ Պէնլևէն զժգոհութիւն յայտնեց, որ ոստիկանութիւնը կիրակի օրը արգելք եղաւ հանրապետական երիտասարդութեան՝ պսակ դնել Ժաննա դ'Արկի արձանի վրա, գտնելով պսակի ժապաւէնի վրայի գրվածը ապստամբային։

Կլօցը պատասխանեց, որ ոստիկանապետն է, որ ներկայ դէպքում հանդիսանում է միակ յանցաւորը, և նա կարձակվի պաշտօնից։

Պալատը 484 ձայնով 17-ի դէմ ընդունեց Պէնլևէի առաջարկած բանաձևը, որ առաջարկում է վճռական կերպով պաշտպանել քաղաքացիների իրաւունքները և որ ազատօրէն ամեն ոք կարող է արտայայտել հանրապետական և ոչ կղերական մտքեր։

Պալատը որոշեց հինգշաբթի օրը քննել ի պատիւ Ժաննա դ'Արկի ազգային տօն սահմանելու հարցը։

Կ. Պոլիս.—Սուլթանի առաջին կամերհէրը այսօր մեկնում է Բերլին՝ յանձնելու կայսրին սուլթանի թանգարժէք ընծաները, նաև վստահեցնելու, որ սուլթանը և իսլամի երկիրը բարեկամական զգացմունքներ են տածում դէպի Գերմանիան, իսկ յանձին կայսրին տեսնում են իրանց հովանաւորողին։

Կ. Պոլիս.—Օսմանեան գործակալութիւնը հաղորդում է, որ կառավարութիւնը կարգադրեց ամբողջ պետութեան մէջ վառել պատերազմի ժամանակ հանգցրած փարոսները և վերացնել ստորջրեայ ականները։

Բելգրադ.—Պաշիչը յայտնեց «Տրիբունայի» աշխատակցին, որ բալկանեան դաշնակիցների պրեմիէրների տեսակցութիւնը տեղի կունենայ ըսկզբում Բալկանեան թերակղզու որևէ տեղում, յետոյ Պետերբուրգում։

Սկօպլէ.—Դուրացցոյից տեղեկացնում են, որ ալբանների մէջ տարաձայնութիւններ են սկսվել սև ու կարմիր գոյների ազգային դրօշակներ ընտրելու առիթով։

Ցէտինիէ.—Գեներալ Վուկօտիչը ընդունեց խօտի ցեղի պատգամաւորութիւնը, որ եկել էր խնդրելու միացնել իրանց Չեռնօգորիային։ Մինիստր-նախագահը յայտնեց, որ ալբանական հարցը գտնվում է մեծ պետութիւնների ձեռքում։

Սալօնիկ.—Յոյն-բօլգարական մասնաժողովը համաձայնութեան եկաւ երկու զօրքերի միջև չէզոք գիծ սահմանելու մասին։

Բանւորական կօրպօրացիաների միութիւնը դիմեց Սօֆիայի և Բելգրադի կօրպօրացիաների բանւորներին մի նամակով, որով կոչ է ուղղված յանուն մարդասիրութեան ազդել իշխանութիւնների վրա, որպէսզի խափանվի կորստաբեր պատերազմը դաշնակիցների միջև, պատերազմ, որ սպառնում է ոչնչացնել ազատարար պատերազմի հետևանքները։

Լօնդօն.—Րէյտէրի տեղեկութիւններին համաձայն, Յունաստանի և Թիւրքիայի միջև գոյութիւն ունեցող դըժուարութիւնները դեռ հարթված չեն։ Թիւրքիան հրաժարվում է հաւաստիացում տալ, թէ կը վերականգնէ մինչև պատերազմը գործադրվող պայմանագրերը, որի վրա պնդում է Յունաստանը, նախազգուշացնելով որ եթէ այդ պահանջը չիրագործվի, նա չի մասնակցի յետագայ բանակցութիւններին։

Աթէնք.—Պաշտօնապէս յայտարարվեց, որ յոյն և բօլգար զօրքերի միջև սահմանվել է չէզոք գիծ ընդհարումից խուսափելու համար։ Այդ գիծը նկատի չի առնվի յոյն-բօլգարական սահմանի վերջնական որոշման ժամանակ։

Բելգրադ.—Բօլգարական մի զօրամաս Իփէկի մօտերը անցաւ Բրագալնիցայի աջ ափը և գրաւեց առանց սերբերի դիմադրութեան գիւղերը։ Սակայն երբ սերբ զինուորական իշխանութիւնները պահանջեցին մաքրել գիւղերը 24 ժամվայ ընթացքում, բօլգարները նահանջեցին։

Եկաւ Գէորգ արքայազնը։

Բերլին.—Շվէյցարական վարկային ընկերութեան ամենամեայ հաշւի մէջ հաղորդված է, որ Թիւրքական արևելեան երկաթուղու 600 ակցիա վաճառվել է Դոյչէ բանկին։ Վաճառումը կապ ունի պատերազմական դէպքերի ստեղծած նոր կացութեան հետ։ Ընդ սմին աւստրիական մի խումբ գնողներ ձեռք են բերել Սալօնիկ Մօնաստիր գծի ընկերութեան ակցիաները։

Բերլին. — Րէյխստագի բիւջէտային մասնաժողովում կենտրոնի պատգամաւորները առաջարկեցին, որպէս զի Գերմանիայում մի տարուց աւելի ապրող օտարերկրացիք, թէկուզ ոչ միջոցներ ձեռք բերելու համար, մասնակցեն սպառազինման ծախքերին։ Պետական գանձատան մինիստրը բողոքեց, սակայն կողմնակից եղաւ Գերմանիայում երկար ժամանակ բնակվող օտարազգիների վրա տուրք նշանակելուն։ Հակառակ եղան սօցիալիստները։ Մասնաժողովը որոշեց հարցը լուծել համաձայն մինիստրի առաջարկութեան։

Պարիզ.—Անգլիական Թագաւորի ծընընդեան օրվայ առիթով Պուանկարէն ուղարկեց շնորհաւորական հեռագիր, ցանկանալով աւելի սերտ հաստատութիւն Ֆրանսիայի և Անգլիայի սրտագին բարեկամութեան։

Բելգրադ. Անգլիական Թագաւորի ծընընդեան և հելլէնների Թագաւորի անուանակոչութեան օրվայ առիթով Պաշիչը այցելեց անգլիական և յունական միսիաները և շնորհաւորեց կառավարութեան կողմից։

Սալօնիկ.—Ազգաբնակութիւնը մեծ խանդավառութեամբ տօնեց Կօնստանդին Թագաւորի անուանակոչութիւնը։ Պատարագից յետոյ Թագաւորը դիտեց զօրքեր և պալատում ընդունեց շնորհաւորողներին։

Վիեննա.—Սալօնիկից տեղեկացնում են, որ Վէնիզէլօսի հրաժարականի լուրը իրականութեանը չէ համապատասխանում։ Թագաւորի և կառավարութեան միջև լիակատար համաձայնութիւն է տիրում։

### ԸՆԴՀԱՐՈՒՄ ՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

22 և 23 մայիսի

Բուդապեշտ. — Պատգամաւորների պալատի նիստը բացվելուց առաջ Խօտը կարդաց դահլիճում հաւաքված օպպօզիցիայի մի յայտարարութիւն, ուղղված կառավարութեան և պալատի մեծամասնութեան դէմ։ Նիստը բացվելուց յետոյ մինիստր-նախագահ Լուկաչի երևալուն պէս բարձրացաւ անասելի աղմուկ, լսվեցին բացագանչութիւններ՝ «գող, կեղտոտ մարդկանց համախմբում»։ Պալատի նախագահը նիստը փակեց, յայտնելով որ ձեռք կառնէ նախկին համապատասխան միջոցներ՝ կարգուկանօնը վերականգնելու համար։ Ոչ-օպպօզիցիօն անդամները դուրս եկան դահլիճից։ Ընդմիջումի ժամանակ դահլիճ բերվեց պարլամենտական պահակախումբը։ Նրա երևալուն պէս սկսվեց սաստիկ ուժեղ աղմուկ։ Պահակախմբի պետը կոմս Խէդէրվարին թրով երեք անգամ հարուածեց գլխից նրա համար, որ Խէդէրվարին պահակախումբն իբր անուանած է եղել սրիկաներ։ Խէդէրվարին ընկաւ։ Աննկարագրելի յուզմունքը մասամբ մեղմացաւ միայն այն ժամանակ, երբ պարզվեց, որ Խէդէրվարին սոսկ թեթև վիրաւորված է։ Իւստը և մի քանի ուրիշ ընդդիմադիր պատգամաւոր արտաքսվում են նիստից։ Այն ժամանակ ոչ-օպպօզիցիօն պատգամաւորները վերադառնում են դահլիճ, իսկ օպպօզիցիան հեռանում է։ Նիստի մնացած մասը ընթանում է հանդիստ։ Նախագահը յայտնում է, որ ստիպված է պարլամենտական պահակախմբի զինուորական կազմակերպութեան պատճառով Խէդէրվարիի հետ տեղի ունեցած միջադէպը յանձնել տեղեկ դատարանի քննութեանը։

Վիեննա.—Կայսրը ընդունեց մինիստր-նախագահ Լուկաչի ներկայացրած հրաժարականի խնդրագիրը և յանձնարարեց Լուկաչին ժամանակաւորապէս վարել հերթական գործերը։

### ԼՐՏԵՍ ՐԷԴԼԻ ԳՈՐԾԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

23 մայիսի

Վիեննա.—«Կոր. Բիւրօն» կտրականապէս հերքում է այն լուրերը, թէ իբր Պրագայի ռուսաց հիւպատոսը խառն է Րէդլի գործում։

Պատգամաւորների պալատում պետական ինքնապաշտպանութեան մինիստր Գէօրգին՝ Րէդլի լրտեսութեան մասին ուղղված հարցապնդմանը մանրամասն տեղեկութիւններ տուեց գործի հանգամանքների մասին զինուորադատական քննութեան հետևանքների հիման վրա։ Րէդլի բնակարանում կատարված խուզարկութիւնը՝ Պրագայում՝ երևան հանեց, որ նա, սկսած 1912 թւի մարտ ամսից, յանձնելիս է եղել այլազգի տէրութիւնների գործակալներին ընդհանուր բնաւորութեան մի քանի հրահանգներ, վերաբերեալ զօրաժողովի և պետական պաշտպանութեան պլանին. վերջին ժամանակի կօնկրէտ ռազմի պատրաստութիւնների մասին անկարելի եղաւ յայտնել, որովհետև առ հասարակ այդ ամենը մատչելի չէին Րէդլին։ Րէդլի դաւաճանութիւնը ապացուցվեց, բայց Րէդլի հետ սերտ յարաբերութեան մէջ գտնվող՝ ներկայիս կալանաւոր Լանտէնի մասնակցութիւնը լրտեսութեան մէջ տակաւին ապացուցված չէ։ Սխալ են այն լուրերը, թէ իբր այդ գործում խառն են բարձրաստիճան օֆիցէրներ և ինչ-որ մի տիկին։ Րէդլի կապ ունենալը Պրագայի ռուսաց հիւպատոսի հետ չէ հաստատվում։ Ապա մինիստրը հերքեց այդ գործի առիթով լրտեսներ Եանդրիչի և միւսների մասին տարածված լուրերը, թէ իբր Րէդլը մատնել է գերմանական զօրքի գաղտնիքները։ Վերջում մինիստրը ասաց, որ առանձին անհատների ամօթալի յանցանքը չը պէտք է արատաւորէ քաջարի զօրքի պատիւը, և վստահեցրեց, որ զինուորական մինիստրութիւնը յամառութեամբ ընդդիմանալու է յայտնագործված հնարքերով և դրակօնական միջոցներ է գործադրելու ամենաչնչին կասկած յայտնվելու ժամանակ։

Պալատը մերժեց չեխ սօցիալիստ Նեմէցի առաջարկութիւնը՝ վիճաբանութիւններ սկսել մինիստրի բացատրութիւնների շուրջ։

## ԲԵՌՆԻ ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ*)

### III

Համագումարի երկրորդ նիստը՝ տեղի է ունեցել նոյն օրը երեկոյեան։ Նախկին նախագահ Գրիմը, յայտարարելով որ շվէյցարացիք արդէն վերջացրել են իրանց անելիքը, նախագահութիւնը յանձնել է Էստուրնել դը-Կօնստանին։ Այս նիստում քննութեան է ենթարկվել համագումարի օրակարգը ըստ էութեան և մեծ էնտուզիազմով քուէարկվել ու միաձայն ընդունվել է հետեւեալ բանաձեւը, որ առաջարկվել էր բիւրօյի կողմից.

«Գերմանական և ֆրանսիական պարլամենտականների առաջին համագումարը, կայացած Բեռնում 1913 թ. մայիսի 11-ին, եռանդուն կերպով մերժում է տեսակ-տեսակ շօվինիստական գրգռումներ սանձող տանելի պատրուակներին համերաշխ լինելը և այն յանդուգն սպեկուլյացիաները, որոնք սպառնում են սահմանագծի երկու կողմից խառնելու ժողովրդի ողջամտութիւնն ու հայրենասիրութիւնը։

«Նա գիտէ և յայտարարում է, որ երկու երկիրները իրանց մեծամասնութեամբ սերտ կերպով կապված են խաղաղութեան հետ—անհրաժեշտ պայման ամէն մի առաջադիմութեան»։

«Նա յանձն է առնում անդադար ջանքերով վերացնել թիւրիմացութիւններ, կոնֆլիկտների առաջն առնել և ի սրտէ շնորհակալութիւն է յայտնում Էլզաս-Լօթարինգիայի ներկայացուցիչներին, որոնք իրանց արած ազնիւ առաջարկութիւններով, քուէարկված միաձայնութեամբ, դիւրացրին երկու երկրների մերձեցումը։

«Նա հրաւէր է կարդում իր անդամներին գործ դնել իրանց բոլոր ույժերը հաւանեցնել ու մեծ պետութիւնների կառավարութիւններին չափաւորել իրանց նաւային և զինուորական ծախքերը։

«Համագումարը ջերմագին ընդունում է Միացեալ-Պետութիւնների կառավարութեան փոխ-քարտուղար Բրիանի՝ իրաւարարական դատաստաններին վերաբերվող առաջարկը։ Նա ցանկանում է, որ երկու երկրի մէջ ծագած կոնֆլիկտները, որոնք չեն հարթվում դիւանագիտական ճանապարհով, յանձնվեն Լա-Հէյի իրաւարարական դատաստանական ատեանին։ Նա հաւաստի է, որ իր անդամներն այդ ուղղութեամբ եռանդուն և յարատեւ աշխատանք ցոյց կը տան։

«Նա համոզված է, որ Ֆրանսիայի և Գերմանիայի մերձեցումը կը դիւրացնէ համերաշխութիւն առաջ բերել եւրոպական այս երկու երկրների մէջ և այդպիսով կը պատրաստէ խաղաղութեան տեւական հաստատումը։

«Նա որոշում է, որ իր բիւրօն կը կազմէ մի մշտնջենական կօմիտէ, որը [illegible] երկու երկրների գործակցութեամբ։

«Նա իր կօմիտէին մանդատ է տալիս պարբերաբար հրաւիրելու համագումարը և գումարելու արտակարգ համագումար, եթէ հանգամանքներն այդ պահանջեն»։

Բանաձեւի ընթերցումը, նրա քուէարկութիւնն ու միաձայն ընդունվելը կատարվել են բուռն ծափահարութիւնների տարափի տակ։ Այսպիսով փակվել է ֆրանս-գերմանական առաջին համագումարը, որին մօտիկ ապագայում յաջորդելու են երկրորդը, երրորդը և այսպէս շարունակաբար։

Ինչ խօսք, որ շվէյցարական այս գեղեցիկ նախաձեռնութիւնը աւելի քան ազնիւ է իր խաղաղասիրական, մարդասիրական և համօգուտ բովանդակութեամբ։

Սակայն կայ մի աննպաստ հանգամանք, որն անկարելի է աչքաթող անել և որը գալիս է խոչընդոտ հանդիսանալու յանուն խաղաղութեան արված վճիռների իրագործմանը։ Այդ հանգամանքը կայանում է նրանում, որ համագումարի պատգամաւորները բոլորն էլ միեւնոյն իրաւասութեամբ չեն օժտված։ Եթէ Ֆրանսիայի պարլամենտը երկրի օրէնսդրական ամենաբարձր ինստանցիան է, եթէ ֆրանսիացի պատգամաւորները, որպէս պարլամենտի անդամներ, իրանց երկրի համար օրէնքներ սահմանելու իրաւունքն ունեն, Գերմանիայում րայխստագը չէ կանգնած իրաւազօրութեան նոյն բարձրութեան վրա. այնտեղ վերջին հաշւով կայսերական կամքն է օրէնք սահմանողը. և ուրեմն ներկայ համագումարի գերմանացի պատգամաւորներն անկարող են պարլամենտական ճանապարհով իրականացնել իրանց տուած վճիռները, ինչ որ հնարաւորութիւն ունեն անելու ֆրանսիացի պատգամաւորները։

Այս հանգամանքն է ահա, որ թեւատում է համագումարին և զրկում նրան անմիջական գործնական արդիւնքների հասնելու հնարաւորութիւնից։

Այսուհանդերձ՝ Բեռնի ֆրանս-գերմանական առաջին համագումարը, թէկուզ զուրկ ամէն մի պաշտօնական բնոյթից ու պաշտօնական մանդատից, պակաս բարերար ազդեցութիւն չի ունենայ երկու ազգերի լարված յարաբերութիւնների և փոխադարձ տարերային անհաշիւ ատելութեան վրա խելացի խորհրդակցութիւնների և գիտակից պրօպագանդայի միջոցով։ Այդպիսով թերեւս երկուստեք ժողովրդին քայքայող զինուորական նորանոր օրէնքների և օր ըստ օրէ սաստկացող սպառազինման ծանր ու կործանարար հետեւանքները աւելի զգալի դառնան նախ երկու ժողովուրդների և ապա նրանց կառավարութիւնների համար։ Ա. Չ.

Ժընեւ

---

*) Տե՛ս «Մշակ» №№ 110 և 111.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՃԱՇԿԵՐՈՅԹ Ի ՊԱՏԻՒ ՕԼԳԵՆԻՆԻ

Հինգշաբթի, Համբարձման տօնի օրը, ցերեկվայ ժամը 3—6, Գրական-Գեղարվեստական Սալօնի դահլիճում, նախաձեռնութեամբ «Մշակի» խմբագրութեան և Սալօնի, կայացաւ մի ճաշկերոյթ ի պատիւ «Бирж. Вѣд.» լրագրի թղթակից Օլգենինի, որ նոր է վերադարձել Հայաստանում կատարած իր ճանապարհորդութիւնից։

Ճաշկերոյթին մասնակցում էին մօտ 60 անձինք երկու սեռի հասարակութեան զանազան խաւերից։ Շատերն էլ անկարող եղան մասնակցել՝ տեղ չը լինելու պատճառով։

Ճաշկերոյթի նախագահ ընտրվեց Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսեան, որ մի գեղեցիկ և զգացված ճառով ողջունեց Օլգենինի կատարած միսսիան, այդ միսսիայի յատկանիշ բնաւորութիւնը, խորին ճշմարտութեան, բայց ճշմարտութեան հետ միասին և խորին մարդասիրական զգացումն դէպի մի բազմաչարչար ժողովուրդ։ Այդ ճառին անմիջապէս պատասխանեց Օլգենին, ցոյց տալով որ ինքը ոչ շնորհակալութիւն է ընդունում, ոչ երախտագիտութիւն, որովհետեւ նա, իբրեւ գրչի մշակ և պրօֆեսիօնալ ժուռնալիստ, կատարել է իր պաշտօնը և պարտականութիւնը, աշխատել է բանալ ռուս հասարակութեան առաջ մերկ ճշմարտութիւնը, իսկ եթէ նա համակվել է խորին կարեկցութեամբ դէպի Թիւրքիայի հայ ժողովուրդը, որովհետեւ իր սեփական աչքերով տեսել է այդ ժողովրդի տանջանքները, ծով ցաւերը, տեսել է, որ այդ ժողովուրդը խեղդվում է իրաւազրկութեան, անիշխանութեան ջրի մէջ, օգնութիւն է աղաղակում և ոչ ոք նրան օգնութեան չէ հասնում։

Ապա Ալ. Քալանթար խօսեց հետեւեալը.

«Ա. Օլգենինի կատարած ճանապարհորդութիւնը Թիւրքահայաստանում ունի հայկական հարցի պարզաբանութեան համար կարեւորութիւն և մեզ այդ հարցով հետաքրքրվողներիս համար առանձին նշանակութիւն։ Նրա տեղեկութիւնները թարմ են, նրա տպաւորութիւնները անմիջական են, նրա վկայութիւնները ականատեսի յայտնութիւններ։ Իսկ մենք վերջին ամիսներում անգիտակ էինք այն գործերի և դրութիւնների մասին, որոնք տեղի ունէին երկրի մէջ։ Օլգենինը անցել է բոլոր հայկական վեց վիլայէթները, կտրելով աւելի քան 2300 վերստ ճանապարհ։ Հայկական հարցի նախկին կարեւոր շրջաններում մենք տեսանք եւրոպացի թղթակիցների, որոնք գնացին Թիւրքահայաստան ուսումնասիրութիւններ կատարելու. այս անգամ մենք նրանցից ոչ ոքի չը տեսանք։ Այժմեան տագնապի ժամանակ միակ լուրջ թղթակից հանդիսանում է Օլգենինը, որը մուտք գործեց Թիւրքահայաստան իրան համար աննպաստ հանգամանքներում։ Օլգենինի բերած տեղեկութիւնները ցոյց են տալիս նախ, որ թէև շատ մեծ չեն եղել ոճիրները, բայց ընդհանուր մթնոլորտը չափազանց ճնշող է և վտանգաւոր Թիւրքահայաստանում, և մարդիկ գտնվում են անակնկալների մշտական սպառնալիքների տակ. երկրորդ՝ հայ տարրը սկսել է արտագաղթ երկրի զանազան շրջաններից, և կան բնակութիւններ, որոնք դատարկվում են մարդկանցից. երրորդ՝ եւրոպական պետութիւնների ներկայացուցիչները շատ քիչ են հոգում հայերի բարեկարգ կենցաղավարութեան մասին և ընդհանրապէս ներկայանում են իբրեւ թիւրքական գերիշխանութեան եռանդուն ջատագովներ. չորրորդ՝ պարզվում է ռուս. գործիչների մի ծրագիր, որով պէտք է սահմանափակումներ արվեն հայերի զարգացման դէմ և այլն։ Օլգենինը առաջարկում է իր կողմից մի քանի միջոցներ՝ մաքառելու վնասակար ազդեցութիւնների դէմ և հարթելու ուղիներ հայկական բարեկարգութիւնների աջողութեան համար։ Մեզ համար հետաքրքրական են նրա կարծիքները։ Մեր կողմից մենք գտնում ենք, որ մենք պէտք է մեծ ջանք և աշխատանք թափենք որոշել այն, թէ ինչ կարող ենք անել մենք թիւրքահայերի համար, և պատրաստել ռուս հասարակական կարծիքը հայկական խնդրի օգտին։ Դա կարեւոր գործ է, որի մասին պէտք է լուրջ հոգատարութիւն ունենալ մեր կողմից»։

Օլգենինը մի քանի անգամ խօսք առաւ և հաղորդեց վերին աստիճանի հետաքրքրական և կարեւոր տեղեկութիւններ իր տեսածի և լսածի մասին, որոնք բոլորովին մի նոր լոյս են սփռում հայկական հարցի վրա։ Այդ տեղեկութիւնների մեծագոյն մասը հասարակութիւնը առիթ կունենայ լսելու երկուշաբթի, նրա դասախօսութեան ժամանակ։

Խօսեցին նաև Շիրվանզադէ, Սօլովեան, տիկին Մամուլեան, իսկ նորից Խատիսեան, Քալանթար և Օլգենին, որին հանդիսականները զանազան հարցեր էին տալիս, և նա լուսաբանում էր։

Ճաշկերոյթից յետոյ լուսանկարիչ Բաբալեանը լուսանկարեց ամբողջ խումբը։

Ապա ժողովականները լիազօրեցին պ.պ. Ալ. Խատիսեանին, Ալ. Քալանթարին և Հ. Առաքելեանին խմբագրել այն դիմումը, որ պէտք է անվի «Бирж. Вѣд.» լրագրի խմբագրութեանը, և որով շնորհակալութիւն յայտնելով նրան իր ձեռնարկութեան համար՝ պէտք է խնդրվի թոյլ տալ Տ. Օլգենինին մի առժամանակ մնալ Թիֆլիսում իր նիւթերը դասաւորելու, մշակելու, որպէսզի կարելի լինի հրատարակել առանձին գրքով։

Ժողովականները շնորհակալութիւն յայտնեցին և Սալօնի ներկայացուցիչ Տ. Նազարեանին իր անխոնջ եռանդի համար։

Ի վերջոյ՝ կարող ենք հաղորդել, որ մի խումբ անձինք յանձն են առել հայթայթել մի գումար, որով կարելի լինի հրատարակել այդ նիւթերը՝ վերին աստիճանի կարեւոր հարցի համար։

## ՄԻ ԱՆՄԱՀ ԿՈԹՈՂ ՑԱՆՈՒԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ

Թող աւելորդ չը համարվի ինձ էլ մի երկու խօսք ասել եղբարք Սողոմոն և Ալեքսանդր Արովեանների վերջին մի նոր աւելի մեծ նուէրի մասին։

Գործին տեղեակ մարդկանց անշուշտ յայտնի կը լինի, որ Մեծ-Ղարաքիլիսայի դպրոցները մօտ 60 տարվայ պատմութիւն ունեն, որոնք իբրեւ տարրական լուսատու ջահեր՝ միակն են եղել ամբողջ Փամբակում և նոյնիսկ սրա հարեւան գաւառներում։ Ու այդ կուլտուրական գործի նախաձեռնութիւնն ու ծանրութիւնը 50-ական թւականների խաւար շրջանում իրանց ուսերի վրա տարել են անհատներ միայն։ Այո, միմիայն անհատներ, որոնց մասին մի քանի անգամ իմ յօդուածներում շեշտել եմ, ուստի և հարկ չեմ տեսնում նոյնը կրկնելու այստեղ։ Սրանով ես ուզում եմ ասել միայն, թէ որքան և հասարակական հաստատութիւնների նկատմամբ հաւաքական յարաճուն ինիցիատիվների կարիքը անհրաժեշտութիւն է որեւէ գիտակից հասարակութեան համար, բայց և այնպէս միշտ ու ամեն օր տեսնում ենք, որ այդ գաղափարը դեռ մեզանում գործնական չէ դարձել, և մեծ մասամբ անհատական ձեռնհեցութիւններն են, որ գալիս զարկ են տալիս մեր հասարակական հաստատութիւններին ու աւելացնում նրանց կուլտուրական առաջադիմութիւնը։ Ահա այս տեսակներից է նաև եղբարք Արովեանների կատարած մեծ գործը, որը փառաւորում է իրանց հանգուցեալ հօր Խաչատուր Արովեանի (չը պէտք է շփոթել «Վէրք Հայաստանի» հեղինակի հետ) յիշատակը և յաւերժացնում այն մարդու անունը, որը կրթութիւն ստացած չը լինելով հանդերձ՝ իր կենդանութեան ժամանակ երբեք յետ չէր մնում [illegible] բարենպաստ և համօգուտ գործերի մասնակցութիւնից։

Ճիշդ է, Մեծ-Ղարաքիլիսայի դպրոցները հրոյ ճարակ դառնալուց յետոյ, նրանց հոգաբարձութիւնը մեծ ռիսկերի դիմեց՝ իր ույժից վեր մի մեծ գործ կատարելու համար։ Նա նոյն իսկ ծրագրել էր դիմել մի քանի պալիատիվ միջոցների, որոնց մէջ ամենահիւանդոտն էր՝ դպրոցները մի քանի տարով փակել, կրթական գործը երկար ժամանակով կանգնեցնել, ուրիշ խօսքով՝ վէրքի վրա վէրք աւելացնել ու այդպիսի անգործնական կերպով առաջ տանել դպրոցների շինութեան գործը, որ այնքան վիթխարի ձեւով նախագծված էր։ Շատերս ապշում էինք նրանց այդ ուտօպիական ռիսկերը լսելով, որոնք ի հարկէ այդպիսի մեծ ռիսկեր էլ պէտք է մնային։ Օրինակի համար՝ ունենալ առ ձեռն դրամ 1000—2000 րուբլի և մօտ 60,000 րուբլիանոց դպրոցական հոյակապ շէնքի նախագիծ կազմել՝ սա մի գիւղական հոգաբարձութեան համար ա՛յլ պայման այնպիսի ինքնավստահութիւն էր, որ գործնականի հետ երբեք հաշվել չը պիտի կարողանար։ Այսպիսի օդային ծրագիրներ շատ ենք տեսել, որոնք սակայն մինչեւ վերջն էլ մնացել են անիրագործելի ծրագիրներ։ Եւ ահա այսօր ուրախալի է, որ հոգաբարձութեան թերեւս այդ կորստաբեր քայլերը յօդս ցնդեցին անհատական առատաձեռն վերահաս օգնութեամբ։

Եղբարք Արովեանների՝ համարեա թէ ույժից վեր և գիւղական կեանքում եզակի ներկայ երեւոյթը—մօտ 35,000 ր. արժեցող այդ զոհաբերութիւնը գալիս ապահովում է ընդ միշտ Մեծ-Ղարաքիլիսայի դպրոցները և ազատում նրանց հոգաբարձութեանը այդ մեծ հոգսից, ազատում է նրան մուրացկանութեան դիմելու վիճակից, սրա-նրա մուտնաթին ենթարկվելու անպատեհութիւնից։

Խօսք չը կայ ի հարկէ, ուրեմն, որ պէտք է շատ շնորհակալ լինել. պէտք է օրհնել նրանց հօր յիշատակը, պէտք է մաղթել այդ երախտագէտ ժառանգներին երկար կեանք ու արև և ցանկանալ, որ մեր միւս ունեւորների քար սրտերը էլ փափկանային, որ նրանք էլ մտածէին այս անցաւոր կեանքում անմահ անուն թողնելու փառքի մասին։

Թող ուրեմն բարեպաշտ Արովեանների առատաձեռն օրինակը վարակիչ լինի ընդհանրապէս շատ տեղերի՝ շատ հարուստների համար։

Մէք. սարկ.

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

### Թեմական տեսչի այցելութեան շուրջը

Գորիս, 16 մայիսի

Երեւանի թեմ. տեսուչ Խզմալեանը ամսիս 12-ին ծխ. դպրոցի ծնողական ժողովում մի զրոյց կարդաց կրթութեան և դաստիարակութեան շուրջը։ Պատմական և անցեալ յիշողութիւնների և գիտական ցուցմունքների հիման վրա՝ մատչելիօրէն բացատրեց գիտական հասկացողութիւնների եղանակները այլ և այլ դարերում կրթական և դաստիարակութեան վերաբերեալ և վերջը յանգելով ներկայումս ընտանիքի կատարելիք աշխատանքի վրա՝ շեշտեց մայրենի լեզուի անհրաժեշտութիւնը մեր կեանքում։ Տեսուչը արժանացաւ բուռն ծափահարութեան։

Երէկ ծխական դպրոցի փորձնական դասերից յետոյ Խզմալեանը ուղեւորվեց Ղափան։

Իր տեսչական աշխատանքներից և պարտականութիւններից բացի՝ Խզմալեանը այս տարի պարապում է գաւառիս մօտիկ պատմական անցեալի և առաւելապէս Դաւիթ-բէգի պատմութեան ուսումնասիրութեամբ, որի մասին այնքան պակաս և կցկտուր տեղեկութիւններ միայն կան մեր պատմութեան մէջ։

Խզմալեանը հաւաքում է տեղեկութիւններ այն բոլոր անհատների մասին, որոնք անցեալում որեւէ կապ են ունեցել Դաւիթ-բէգի գործունէութեան և մղած կռիւների հետ։ Հետաքրքրվում և ուսումնասիրում է այն բոլոր պատմական աւերակներն ու յիշատակ-տապանաքարերը, որոնք համարվում են Դաւիթ-բէգի կռիւների վայր և կամ յիշողութիւն նրա մօտիկ գործակիցների։

Եթէ Խզմալեանը ունենայ հնարաւորութիւն այլ անգամ աւելի երկար մնալու գաւառիս որոշ շրջաններում, ուր կատարվել են Դաւիթ-բէգի կռիւները, կարող կը լինի յիշատակների, պատմուածքների և մինչեւ իսկ գուցէ և հաւաստի աղբիւրների հիման, որոնց համար հետախուզութիւն է հարկաւոր, նոր լոյս սփռել Դաւիթ-բէգի պատմութեան վրա և գեղեցիկ գործ կատարել։

Սազանդարեան

### Մեր դպրոցը

Կարս, 19 մայիսի

1912 թ. նոյեմբերի մէկից փակվեցինք տներում և վառեցինք վառարանները մինչեւ ապրիլի վերջը։ Ահա մայիսն էլ վերջանում է, դեռ մի գեղեցիկ օր, մի տաք օր չենք տեսել։ Ամէն օր ցուրտ, ցեխ, անձրեւ և տխուր օրեր։ Մնաց մեզ չորս ամիս, որ պիտի տաքանանք, այն էլ Աստուած գիտէ պիտի տաքանա՞նք թէ ոչ։ Կարսում յունիս ամսի մէջ էլ ձիւն է եկել։ Ցանցաւորներին պատժելու համար փոխանակ Սիբիր աքսորելու, թող Կարս ուղարկեն։ Սրանից լաւ Սիբիր չը կայ։ Ս. Տէր-Մելքիսեդեկեան

### Ձայն Սղնախից

Սղնախ, 20 մայիսի

Սղնախի Փոխադարձ Վարկի Ընկերութիւնը բոլորեց իր գոյութեան առաջին տարին։ Մի տարվայ ընթացքում բանկը ցոյց տուեց զգալի առաջադիմութիւն։ Բերում ենք համառօտ հաշիւը։ Բանկում փող մտաւ մօտ 300,000 ր., դուրս գնաց 292,000 ր., դրամարկղում կայ 8000 ր.։ Մուրհակներով փոխ է տրված 150,000 ր., վճարվել է 76,000 ր., մնում է ժամանակային 74,000 ր., ծախսված է շարժական գոյքերի և այլ ծախսերի համար 3052 ր. 48 կ., պահ տրված փողի տոկոս ստացվել է 2400 ր., ուղարկված են ուրիշների փողեր ուրիշ քաղաքներ 11,000 ր., կօմիսիայով ընդունված է և յանձնված 5000 ր., օգուտ ստացվել է 7500 ր.։ Բացվելու օրը բանկն ունեցել է 72 անդամ 6610 ր. անդամակցական վճարներով. այժմ ունի 460 անդամ 30,000 ր. անդամակցական վճարներով։ Պահ է տրված 91,000 ր., դուրս է տարված 45,000 ր., այժմ պահեստի փող կայ 46,000 ր.։

Սպիտակ Ծաղկի տօնը ունեցաւ հետեւեալ արդիւնքը։ Սղնախը տուեց 355 ր. 79 կ., Ցարսկիէ-Կոլօդցի՝ 164 ր. 42 կ., Բակուրցիխէ՝ 64 ր. 85 կ., Լագոդեխ՝ 55 ր. 90 կ., Գուրջաանի՝ 33 ր. 7 կ., Քոդալօ՝ 14 ր. 62 կ., Կաճրեթի՝ 13 ր. 58 կ., Վաքիրի՝ 12 ր. 56 կ., Բոդբէ՝ 31 ր. 5 կ., Ախալշէնի՝ 15 ր. 21 կ., Վելիսցիխէ՝ 11 ր. 76 կ., Կարդէնախի՝ 16 ր. 5 կ., Կօլակի՝ 7 ր. 16 կ., Միրզաանի՝ 2 ր., Անագա՝ 17 ր. 50 կ., Կելմէչուրի՝ 4 ր. 18 կ., Մաշնաանի՝ 18 ր. 29 կ., Բոդբիսխեվի՝ 7 ր. 51 կ.։ Ընդամենը Սղնախում ստացվել է 355 ր. 79 կ., գաւառներում՝ 489 ր. 71 կ., իսկ ընդհանուր գումարն է՝ 845 ր. 50 կ.։

N. N.

## ԵՒԼԱԽ-ՇՈՒՇԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՑ ԼՈՒՐԵՐ

Եւլախ, 7 մայիսի

Խանքէնդից գրել էի ճանապարհներում ճանապարհորդների հետ պատահած դժբախտութիւնների մասին. այն հայ օրիորդը, որի ձեռքը, ոտքը փշրվել էր, կառքը շուռ գալուն պատճառով, և Աղդամի հիւանդանոցում էին տեղաւորել, հետեւեալ օրը վախճանվեց։ Հանգուցեալի դիակը ազգականները տեղափոխեցին Շուշի։ Մնացեալ 4—5 վիրաւորվածները առողջանալու վրա են։

Աղդամում վերջերս եղբ. Ջիւանշիրեանները կառուցել են մի հսկայական ջրաղաց, որը աշխատում է մօտորով։ Այդ ջրաղացի վրա ծախսված է մօտ 100,000 ր.։ Ջրաղացը շատ մեծ յարմարութիւններ պիտի տայ շրջակայ գիւղացիներին, մանաւանդ գետերի ջրերը պակասելիս, որը մերթ ընդ մերթ պատահում է ամառվայ ընթացքում և դժուարութիւններ ստեղծում բնակիչների համար։

Եւլախում բաւական թւով երկաթուղային ռելսներ են ստացված Սարիղամիշից՝ Եւլախ-Շուշի գծի համար. ռելսները դէպի ճանապարհները փոխադրելու համար տեղական բանւորները բաւական դժուարանում են, որովհետեւ տեղացիների համար անծանօթ գործ է. կարիք է տեսնվում ռուս բանւորների։

Եւլախից մինչեւ Աղդամ գարու և ցորենի հասկերը լաւ հունձ էին խոստանում։ Բարգի, Քօչարլու, Շիրվանլու և Աղդամի արտերը 2—3 ամիս է՝ ինչ մի կաթիլ անձրեւի երես չեն տեսել, որի պատճառով չը բարձրացած հասկերը սկսել են դեղնել։ Ամսիս 4-ին մի քիչ անձրեւ տեղաց։ Իսկ Աղդամից մինչեւ Շուշի՝ հայկական գիւղերի շրջակայքը լաւ բերք են խոստանում և գիւղացիք բաւական գոհ են։

Եւլախում սպասվում է Սարուխանեանն և Զաքալաևը մի խումբ ճարտարապետների հետ, որոնք գետերի ներկայ ժամանակ, երբ ջրերը շատ են լինում, պիտի չափեն Խաչէն և Թարթառ գետերի լայնութիւնը կամուրջների նշանները դնելու։ Սպասվում է, որ առաջիկայ տարվայ ամառ մինչեւ Ասկարան՝ գիծը պատրաստ կը լինի և երթեւեկողները բաց գնացքներից կարող են օգտվել։

Եւլախի բնակիչների կեանքը միանգամայն անտանելի է. գեղի համար անգամ մի կտոր միս չէ ճարվում. տեղացիք քոչել են ամարանոցներ՝ տանելով իրանց հետ ամեն ինչ։ Երկաթուղու կայարանի բուֆետը կենսական մթերքներ ստանում է Գանձակից, իսկ բնակիչները ապրում են կաթով, ձուով, մածնով։ Ս. Գարագաշ

## ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Երէկ, մայիսի 24-ին, Թիֆլիսի նահանգական դատարանի II-րդ քրէական բաժնում նշանակված էր երկու դատ, այն է՝ 1) Ներսիսեան դպրոցի նախկին կառավարիչ Կ. Գասպարեանցի գանգատը, որով մեղադրում էր «Մշակի» խմբագիր Հ. Առաքելեանին քրէական օրէնսգրքի 1535-րդ յօդուածով, այն է՝ զրպարտութեան մէջ. 2) յօբելեանական յանձնաժողովի նախագահ բժշկ. Ա. Զարզարեանցի գանգատը, որով մեղադրում էր նոյն Հ. Առաքելեանին, իբրեւ «Մշակի» խմբագրի, նոյն յօդուածով, զրպարտութեան մէջ։

Առաջին գործի էութիւնը հետեւեալն է։

«Մշակի» անցեալ տարվայ № 208-ում տպված է մի յօդուած «Ներսիսեան դպրոցի նոր դէպքը» վերնագրով, որի մէջ քննադատելով հոգաբարձութեան անփութութիւնը գանձապահ Ալիխանեանի կատարած 5800 րուբլու զեղծման մասին՝ պահանջվում էր հոգաբարձութիւնից հանդէս գալ և բացատրել հասարակութեանը գործի էութիւնը։ Այդ յօդուածի մի կտորի մէջ ասված է հետեւեալը.

Բացի Ալիխանեանի կատարած վատնումից, խօսվում է հասարակութեան մէջ, որ երեւան է եկել մի այլ հանգամանք։ Դպրոցին պատկանող շուկան, ուր ամեն կիրակի մեծ բազար է լինում, մինչեւ վերջերս բերում է եղել եկամուտ ամեն կիրակի ոչ աւելի քան 15 րուբլի։ Այդպէս է եղել ցոյց տալիս շուկայի կամ դպրոցի կալուածների կառավարիչը։ Սակայն, ինչպէս ասում են, վերջերս հոգաբարձութիւնը հաստատում է փաստական կօնտրօլ շուկայի արդիւնքի վրա, և նա սկսում է տալ արդիւնք ամեն կիրակի 80—85 ր.։ Ո՞ւմ գրպանն է եղել մտնում ամեն կիրակի 70 րուբլին,—ահա ինչ պէտք է իմանալ։

Այսպէս թէ այնպէս, քանի որ հասարակութեան սեփականութիւն է դարձել լուրը այդ զեղծումների մասին, հոգաբարձութիւնը պարտաւոր է ճշգրիտ տեղեկութիւններ հաղորդել, թէ ճիշդ են արդեօք այդ լուրերը, ինչ չափով, որպիսի հանգամանքների մէջ են կատարված, ո՞վ է իսկական մեղաւորը՝ անհոգութեան մասին։

Արդ, կառավարիչ Գասպարեանը ներկայացնելով դատարանին այդ կտորի թարգմանութիւնը՝ գանգատվում է, որ դրանով իրան է ակնարկվում, ուստի ինքն զրպարտված է։

Հ. Առաքելեանի պաշտպան երդ.-հաւատարմատար Եսկուլեան նիստը բացվելիս յայտնեց դատարանին հետեւեալը. «Իմ կլիէնտ Հ. Առաքելեանը այդ յօդուածը տպելիս բնաւ նպատակ չէ ունեցել Կար. Գասպարեանին կամ շուկայի կառավարչին կամ ուրիշ որեւէ մի անձի զրպարտել, այլ իբրեւ հասարակական շահերի պաշտպան՝ կամենալով պարզել եղելութիւնը, իր յօդուածի սլաքները ուղղել է Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան դէմ, որպէսզի սա լուսաբանէ, թէ արդեօք ճի՞շդ որ տեղի են ունեցել վատնումներ, ո՞վ է կատարել այդ վատնումները. որ նա՝ Համբ. Առաքելեանը նոյնիսկ չը գիտէր ո՛վ է շուկայի կառավարիչը. հետեւաբար նա համաձայն է տալ «Մշակի» մէջ Գասպարեանի հերքումը այդ յօդուածի դէմ, երբ նա բերի, և կցել նրան վերաբերեալ յայտարարութիւնը»։

Կ. Գասպարեանի պաշտպան Տէր-Աստուածատրեանը յայտնեց, որ նա խնդրում է դադարեցնել գործը։

Դատարանը, ի նկատի ունենալով այդ յայտարարութիւնները, որոշեց դադարեցնել գործը։

—

Երկրորդ գործի էութիւնը հետեւեալն է։

Անցեալ տարի, երբ հայկական գրերի գիւտի և տպագրութեան յոբելեանի առիթով բանակռիւ ծագեց «Մշակի» և «Հորիզոնի» միջև, «Մշակում» տպվեցին մի քանի յօդուածներ այդ վէճի առիթով, որոնց մէջ շօշափվեց և «Հայրիկեան» կոչված ֆօնդի վատնման խնդիրը։ Այդ յօդուածներից մէկի, այն է «Մշակի» № 203-ում տպված «Ցետաձգե՞լ թէ ոչ» վերնագրով յօդուածի մէջ կայ հետեւեալ պարբերութիւնը.

Այդ առաջին զիջողութիւնը անելուց յետոյ, խրախուսված հօրիզօնականները նոր զիջումներ են պահանջելու, այն է՝ որ լուծվի Էջմիածնի յանձնաժողովը, որ տօնակատարութիւնը չը կատարվի Էջմիածնում, որ գործի գլուխ կանգնեն Լէօները, Զարգարեանները, Գր. Վարդանեանները և tutti quanti, իսկ այդ ամենի հետեւանքը լինելու է այն, որ հայ հասարակութիւնը, հայ ժողովուրդը, հայ ինտելիգենցիան անտես է անելու և Էջմիածինը, և Թիֆլիսի յանձնաժողովը, և կամ չէ մասնակցելու տօնին, կամ ինքն է կազմակերպելու։ Որովհետև պարզ է, որ ոչ ոք մի կոպէկ անգամ չի հաւատայ թէ գրական ֆօնդի համար և թէ դպրոցական ֆօնդի համար այնպիսի անձանց, որոնք այսօր մեր մէջ շարունակողն են «Հայրիկեան ֆօնդի» մաքրագարդման գործի։

Բժիշկ Ա. Զարգարեան, ենթադրելով որ Հայրիկեան ֆօնդի վատնման մասին ասածը իրան է վերաբերում, ներկայացնելով դատարանին այդ կտորի թարգմանութիւնը, գանգատ էր սկսել իրան զրպարտված նկատելով։

Հ. Առաքելեանի պաշտպան երդ.-հաւատարմատար Եակուլեան յայտնեց, թէ այդ յօդուածի մէջ Հայրիկեան ֆօնդի մասին ակնարկը բնաւ չէ վերաբերում բժիշկ Զարգարեանին, որին Հ. Առաքելեան և բնաւ միտք չէ ունեցել մեղադրել նրա վատնման մէջ, քանի որ նա «Հայրիկեան ֆօնդի» յանձնաժողովի կազմին չէ պատկանել և մասնակցութիւն չէ ունեցել. հետևաբար, եթէ իր կլիէնտը ոճի անաջող դարձուածով առիթ է տուել բժ. Զարգարեանին ենթադրել, որ այդ ակնարկը իրան է վերաբերում, նա ներողութիւն է խնդրում, որ ոճի անաջող դարձուածով նրան վիրաւորել է»։

Այս յայտարարութիւնից յետոյ բժ. Զարգարեանի հաւատարմատար Բուկշտէյն իրան գոհացած համարելով, դատարանը որոշեց դադարեցնել գործը։

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Վաղը, կիրակի, ցերեկվայ ժամը 1-ին, Հայ Գրողների Կովկասեան Ընկերութեան նախաձեռնութեամբ, Խօջիվանքի հայոց գերեզմանատանը կը կատարվի հոգեհանգիստ Ծերենցի գերեզմանի վրա, նրա մահվան 25-ամեակի առիթով։

◆ Այսօր երեկոյեան Թիֆլիսի Ժողովարանում Հայ Գրողների Ընկերութիւնը, ժողովրդի ցանկութեամբ, կրկնում է Սայաթ-Նովայի երեկոյթը։ Ծրագրի մէջ աւելացված են Սայաթ-Նովայի այն երգերից, որոնք չեն մտած Ախվերդեանի ժողովածի մէջ։ Մի խումբ տիկիններ և օրիորդներ վերջում հայկական պարեր են պարելու։ Երեկոյթին հրաւիրված է «Бирж. Вѣд.» թերթի յայտնի թղթակից Օլգենինը։

◆ Մեզ հաղորդում են, որ պրօֆ. Ն. Մարրը ամսիս 29-ին կը ժամանի Թիֆլիս և անմիջապէս կուղևորվի Անի՝ պեղումները շարունակելու նպատակով։

◆ Նոր-Նախիջևանի «Լոյս» շաբաթաթերթի մէջ կարդում ենք. «Ամսիս 26-ին և 27-ին քաղաքային թատրոնի մէջ երկու հետաքրքրական դասախօսութիւն կը լինի։ Առաջինը՝ պրօֆ. Մարր կը կարդայ Անիի պեղումների մասին և երկրորդը՝ պրօֆ. Մարրի աշակերտ և օգնական Օրբելին կը կարդայ «Վանի վիլայէթները» դասախօսութիւնը։ Անկասկած այս երկու դասախօսութիւններն էլ պէտք է որ հետաքրքրութիւն առաջ բերեն մեր մէջ։ Մուտքից գոյացած գումարի մի մասը տեղիս գրական-գեղարուեստական ընկերութիւնը, որ և այս դասախօսութիւնների նախաձեռնողն է, պէտք է դնէ պրօֆ. Մարրի տրամադրութեան տակ՝ պեղումների վրա գործադրելու նպատակով»։

◆ Վաղը, վրաց սեկցիայի խնդրքով, որ զիջում է իր հերթական օրը, Զուբալովեան Ժողովրդական Տանը տեղի կունենայ ճապօնական դրամատիկ խմբի ներկայացումը Տօկիոյի կայսերական թատրոնների դերասանուհի Հանակօ-Օօտայի գլխաւորութեամբ։ Գները ժողովրդական են։

◆ Մայիսի 23-ին վաճառականական բանկի բաժնետէրերի ընդհանուր ժողովի շարունակութեանը նախագահում էր Ալ. Խատիսեան, քարտուղար էր Ստ. Գալստեան։ Ժողովը զբաղվելու էր երրորդ դիրեկտորի ընտրութեամբ, բայց ժողովի սկզբում պարզվեց, որ Ստ. Մազմանեանը, որ անցեալ ժողովին ընտրվել էր դիրեկտոր, հրաժարվել է այդ պաշտօնից, այնպէս որ այս ժողովին ընտրվեցին երկու հոգի՝ Մինաս Բերբերեան և Վ. Տէր-Զաքարեան, վերջինս կառավարչի պաշտօնով։ Առաջինը ստանալու է 8000 րուբլի ռոճիկ տարեկան, իսկ վերջինը 12,000 րուբլի։ Վերստուգիչ յանձնաժողովի ընտրութիւնը յետաձգվեց մի այլ անգամի։

◆ Ստացանք Ժողովրդական Տան ռուս դրամատիկական սեկցիայի 4-ամեայ գործունէութեան տեղեկագիրը, որից երևում է, որ սեկցիան յիշեալ 4 տարում Ժողովրդական Տանը տուել է ընդամենը 252 ձրի և վճարովի ներկայացում. ընդհանուր եկամուտը եղել է 4 տարում 43,651 ր. 26 կ., իսկ ընդհանուր ծախքը՝ 42,301 ր. 87 կոպէկ։

◆ Վաղը, կիրակի, ցերեկվայ ժամը 12 և կէսին, Ժողովրդական Տանը տեղի կունենայ վրացական առաջին բանւորական երգեցիկ խմբի ժողովրդական համերգը Մ. Կավսաձէի ղեկավարութեամբ։ Խումբը բաղկացած է 40 հոգուց։ Նախ քան համերգը՝ Մ. Կավսաձէ կը կարդայ զեկուցում «Վրացական երաժշտութիւնը և նրա զարգացումը» թեմայով։

◆ Պետերբուրգ են մեկնում, մասնակցելու Թիֆլիսի կողմից համառուսական առողջաբանական ցուցահանդէսին՝ բժիշկներ Խարազեանը և Միրաքեանը։

◆ Քաղաքային վարչութեան առաջ միջնորդված է երկու ամսով արձակուրդ տալու քաղաքային բժիշկներ՝ Տէր-Ներսէսեանին, Ցարութիւնեանին, Արովանին, Գուլազեանին, Մօնինին, Խարազեանին, Միրաքեանին, Զապլոցովսկիին, Գէդեվանովին և Թադէոսեանին։

◆ Բժ. Ստեփանեանի բացակայութեան ժամանակ քաղաքային սանիտարական բժշկական տեսչի պարտականութիւնները կատարելու է բժ. Թարխանեանը։

◆ Թիֆլիսի մի խումբ ձայնաւորներ դիմել են քաղաքագլխին խնդրելով զեկուցանել դումայի նիստում այն անձերի ցուցակը, որոնք մտնում են պոլիտեխնիկումի տեղի հարցը ուսումնասիրելու նշանակված մասնաժողովի մէջ, որպէս զի դուման հնարաւորութիւն ունենայ միջնորդել փոխարքայի առաջ՝ մտցնելու յիշեալ մասնաժողովի կազմի մէջ նաև իշխ. Գ. Թումանեանին, որ այնքան աշխատած է յօգուտ Թիֆլիսի ապագայ կրթական հաստատութեան։

◆ Ժողովրդական Համալսարանների Ընկերութիւնը վաղը, մայիսի 26-ին, Կ. Հ. Բարեգործ. Ընկ. շէնքի մէջ կազմակերպում է Ա. Ցարութիւնեանի դասախօսութիւնը՝ քաղաքական վերջին դէպքերի մասին։ Գները 10 և 5 կ.։ Սկիզբն է ժամը 12-ին ցերեկով։

◆ Շուտով Խարփուխ կոչված քաղաքամասում կը բացվի հասարակական ակումբ։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը կարգադրել է ոստիկանական պաշտօնեաներին առանձին հսկողութիւն ունենալ գիշերները կասկածելի անձերի վրա, որոնք կարող են ունենալ գողացված իրեր։

◆ Քաղաքային ծննդաբերական ապաստարանը իր նոր շինութեան մէջ կը սկսէ գործել հոկտեմբերից։ Յատկացված է 14,000 րուբլի նոր շինութիւնը կահաւորելու համար։

◆ Կօջօրում բացվել է պօստ-հեռագրական բաժանմունք ամառվայ ընթացքում։

## ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

### ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՐԵԿՈՅԹԸ

—

Մայիսի 23-ի երեկոյեան Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում տեղի ունեցաւ Հայ Գրողների Ընկերութեան հերթական երեկոյթը՝ նուիրված Ծերենցի յիշատակին։

Երեկոյթը սկսվեց ժամը 9-ին Յ. Թումանեանի համառօտ բանախօսութեամբ, ուր ջերմ խօսքերով դրուատվում էր հանգուցեալ գրողի գրական դէմքն ու տաղանդը։

Այնուհետև խօսեց Լէօն։

Խօսեց մօտ մի ժամ և այն էլ ոչ այնքան Ծերենցի, որքան եկեղեցական վէճերի ու Հասունի արարքների մասին, որքան մի շարք «յետադարձ հայեացքներ» ուղղելով մեր միջնադարեան անցեալին։

Եւ թւում էր, թէ խօսողը այդ միջոցին մոռացած, թէ ինչպիսի աուդիտօրիայի հետ գործ ունի, երկար ու բարակ պատմում էր Դ. կամ Ե. դասարանի աշակերտներին հայոց պատմութիւնից էջեր մօնգոլա-թաթարական արշաւանքների մասին։

Պարզ է, որ այդ տարրական տեղեկութիւնները միայն ձանձրոյթ, միայն դժգոհութիւն ու սառնութիւն կարող էին պատճառել։

Վերջում բանախօսեց Ն. Աղբալեան նոյն նիւթի մասին։

Հայոց գրականութիւնը բաժանելով երեք շրջանի, սկսած 60-ական թւականներից, բանախօսը հայ մտքի զարգացման առաջին շրջանը բնորոշեց երկու խօսքով՝ հայրենասիրութիւն և կրօնասիրութիւն։ Ծերենցին դասեց այդ շրջանի գրողների՝ Ալիշանի, Խրիմեանի, Պռօշեանի շարքը։

Երկրորդ շրջանը նոյնպէս բնորոշեց երկու խօսքով—ազգասիրութիւն և կրօնասիրութիւն։ Վերջինս այս շրջանում արդէն երկրորդական նշանակութիւն է ստանում, որովհետև այլ ևս կրօնը չէ ազդակ հանդիսանում ազգային միութեան, այլ լեզուն (Արծրունի, Րաֆֆի)։

Երրորդ շրջանը անուանեց ժողովրդական։

Այնուհետև թռուցիկ վերլուծութիւն անելով, շեշտեց, որ Ծերենցի վէպերի իմաստն էր վերարտադրել հայոց պատմական անցեալը և նրա վրա հիմնաւորել հայ ժողովրդի երկունքը և պատրաստել նոր սերունդը ժամանակի տենչերը մարմնացնելու համար։ Նրա երեք վէպերն էլ՝ «Թորոս Լևոնի», «Թէոդորոս Ռշտունի» և «Երկունք 9-րդ դարու» այդ իսկ պատճառով կարելի է անուանել «երկունք»։ Ծերենցի վէպերի դրդապատճառը Զէյթունի ապստամբութիւնն էր և հայկական հարցը, և որովհետև Կիլիկիայի հայոց թագաւորութիւնը վերականգնելու երազները դեռ ևս թարմ էին ժամանակի թիւրքահայ երիտասարդ գործողների մէջ, ուստի Ծերենցն էլ, իբրև լաւագոյնը այդպիսիներից, Կիլիկիայի անցեալը նիւթ առնելով, անց է կացնում իր մտքերն ու տենչերը՝ ժամանակակից սերունդը պատրաստելու համար։

Մէջ ու մէջ այդ երեկոյթին երգում էր Գայիանեան դպրոցի խումբը, բաւականաչափ աջողութեամբ։

Վերջում հանդէս եկաւ աշուղ Հազրբին։

Աշխատակից

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մուշ, 3 մայիս

«Մշեցի» ստորագրութեամբ «Նորութիւններ Տարօնէն» թղթակցութիւնը կարդացի «Մշակի» № 70-ի մէջ։

«Ս. Կարապետի վանքը, որ ունի ժառանգաւորաց վարժարան մը 50 աշակերտներով և 7—8 ուսուցիչներով, երկու տեսուչներով միանգամայն...» գրված տողերը ուղիղ չեն, որովհետև ս. Կարապետի վարժարանը ունի միայն 3 միայն ուսուցիչ և մէկ կառավարիչ. մնացեալ 3-ը—այլ ոչ թէ ըստ Մշեցիի 6—վանքի ներքին պաշտօնեաներն են, որոնք որպէս այցելուներ դպրոց կը յաճախեն։ Վերջիններէն մէկը վանքի գրագիրն է, միւսը անոր օգնականը և միանգամայն առաւօտ երեկոյ եկեղեցին մէջ երգող, իսկ երրորդը կապուած է վանքի տնտեսութեան հետ և կը հսկէ աշակերտաց կերակուրի վրայ ալ, քանի որ վարժարանը գիշերօթիկ է և ունի այժմ 62 աշակերտ, իսկ այն ատեն 67 հոգի էին, երբ Մշեցին գրած է իր նամակը։

Նամակին մէջ ուղիղն այն է, որ վանքին ցորենը սպառած է. փոխանորդը չնայելով իր առաջացած տարիքին (70)՝ ձմեռը ոտքով Զխուր է գացած և մօտ 250 քիլէ ցորեն հաւաքած։ Արևելեան վանականը—ոչ ցանկալի—համենի ստորութեամբ՝ վանքերը ունեցած են իրենց թեմերը, որով պահած են, կը պահեն և պիտի պահեն ալ դեռ, երեւ, իրենց գոյութիւնը, սակայն ներկային մէջ «Տէրն է միայն, որ աշն ու խաչը զօրաւոր է դարձուցած», այլ ոչ թէ ժողովրդին ջերմեռանդութիւնը, որ առատաբար նուիրաբերած է։ Վարդան վարդապետը յայտնի է— եւ այս անուրանալի է—որ Իսթիքլալին ատեն մեծ գործ է տեսեր Տարօնի մէջ և գնահատուած է ոչ միայն տեղացիներէն, այլ և ազգ. պատրիարքարանէն և նոյնիսկ օտար հիւպատոսներէն, որոնցմէ ստացած գնահատական նամակները կը պահուին դեռ. և ատոր համար է միայն, որ ժողովուրդը կը համակրի և կուտայ իր նուէրները։ Վանքին դարմանը այս տարի ամենևին չէ վերջացած, այսօր ալ դեռ հին դարման կայ, և վանքը առհենին օգնած է նոյնիսկ իր շրջակայ գիւղացիներուն ուղղակի դարմանով և կամ անոնց անասուններն իր ախոռներուն մէջ պահելով։ Ասով ինարկէ բնաւ չեմ ուզեր արդարացնել վանքի արդի մատակարարութիւնը. անշուշտ՝ որպէս թիւրք կառավարութեան իշխանութեան տակ գտնուած հաստատութիւն մը՝ բարեկարգութեան և անշահախնդիր մարդոց օգնութեանը պէտք ունի։

Թիւրքահայերս շատ աւելի շահադէտներ ենք, անշուշտ, քան ռուսահայերը և կամ պարսկահայերը։

Տարօնցիները լաւ կը ճանչնան, Վարդան վարդապետը գիտեն որ միջավայրի խորամանկութիւնը կրնայ ունենալ, սակայն նա իսկական բարեպաշտ է և միշտ պաշտպան հող, հետևաբար «մեծ պանքը գլուխ-գլուխ ծոմ պահած է (միայն գիշերները)» բառերը չեն համապատասխաներ ճշմարտութեան։

Վահագն

## ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Կ. Պօլսում ձերբակալվում են յայտնի մօլլաներ, որոնք մզկիթներում բացարձակ պրօպագանդա են մղում «Մ. և Ա.» կօմիտէի դէմ։

◆ Արաբական շարժումը Թիւրքիայի դէմ սպառնում է ունենալ շատ լուրջ հետևանքներ։

◆ Պաշիչը և Գէշօվը համաձայնել են, որ եթէ բալկանեան չորս պետութիւնների համագումարը չը յանգէ դրական վճռի, այն դէպքում դիմումը է լինելու Ռուսաստանի միջնորդութեանը։

◆ Բէլգրադում խօսում են, որ Աւստրիան յամառութեամբ խորհուրդ է տալիս Բուլղարիային պատերազմ յայտարարել Սերբիային։

◆ Սօֆիայից հեռագրում են, որ Գէշօվը հրաժարական տուեց ամբողջ կաբինէտի հետ։

◆ Գեներալ Սավօվի հրամանով զօրքից դուրս հանվեցին բոլոր ռուս կամաւորները։ Դա մի տեսակ ցոյց է Ռուսաստանի դէմ, որովհետև բուլղարական ղեկավար շրջանները հաւատացած են, թէ ռուսաց կառավարութիւնը պաշտպանում է Սերբիային։

◆ Ռուսաց դիւանագէտների կարծիքով, պէտք է այժմեանից այնպէս գործել, որպէսզի Բօսֆօրը երբ դադարէ թիւրքական լինելուց, դառնայ ռուսական։ Թիւրքիան եթէ ոչ այսօր, բայց վաղը կորցնելու է Կ. Պօլիսը։

◆ «Веч. Вр.»-ի ասելով, նոր նշանակված Մոսկվայի նահանգապետ կոմս Մուրավիէվը նշանակվում է ներքին գործերի մինիստրի օգնական Ջօլոտարիէվի տեղ, որն ուրիշ պաշտօն է ստանալու։

◆ Պէկինում գաղտնի ոստիկանութիւնը երևան հանեց դաւադրութիւն, որի նպատակն էր սպանել պրեմիեր-մինիստրին պարլամենտում հանդէս գալու ժամանակ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

## Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

### ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թւի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

### ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Պօստաւոր գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.։ Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—**Պօստաւոր գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստաւոր գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագոններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12 ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.։ **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.։

ԲՈՐԺՈՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.։

### ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր. **Պօստաւոր գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստաւոր գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստաւոր գնացքը** № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26/25—(II և III կարգի վագոններով)—10 ժ. 50 ր. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՕՐԺՕՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

**ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ**

Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

**Ամեն օր, բացի կիրակի օրերից**
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներվային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Յ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Օ. Վ. ԳԷԵՎՕՆԿԱԲԱ-ԷՆԳԷԼ—6—7 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեանց

1. 0—55

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՀՐԱՒԷՐ

Վրաստանի և Իմերէթի հայոց վիճակային կօնսիստօրիայի կարգադրութեան համաձայն Թիֆլիսի Մուղնու ս. Գէորգ եկեղեցում նշանակված է նոր երեցփոխի ընտրութիւն կիրակի, մայիսի 26-ին, պատարագից յետոյ ժամը 12-ին. ուստի խնդրում եմ նոյն եկեղեցու մեծապատիւ ձայնատու ծխականներին՝ շնորհ բերել նշանակած ժամին ընտրութեանը մասնակցելու։

Թիֆլիսի հայոց եկեղեց. Ա. մ. գործակալ՝
Սարգիս աւ.ք. Շիօյեան

422. 1—1

### ՀՐԱՒԷՐ

Սրբազան առաջնորդ տէր-Մեսրոպ եպիսկոպոսի կարգադրութեան համաձայն, կիրակի, մայիսի 26-ին, ցերեկվայ ժամը 12-ին, ՋԻՐԱՇԵՆԻ Ս. ԱՒԵՏԻՍԵԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ծխականք հրաւիրվում են ընդհանուր ժողովի։

Օրակարգի խնդիրներն են՝

1) Հաշւեքննիչների ընտրութիւնը 1911—12 տարվայ դպրոցի և եկեղեցու հաշիւները քննելու համար։
2) Եկեղեցու վերանորոգութիւնը։
3) Եկեղեցապատկան տան երկրորդ յարկի շինութիւնը։
4) Գանձանակի վերացման խնդիրը։
5) Սարկաւագի խնդիրը։
6) Ուրիշ խնդիրներ։

Առանձին հրաւէրներ չեն լինելու։ Ժողովը, չը կայացած դէպքում, տեղի կունենայ հետեւեալ կիրակի, յունիսի 2-ին։

Հոգաբարձութիւն

421. 2—1

### ՀՐԱՒԷՐ

Շամքօրեցոց ս. Աստուածածին (Կարմիր Աւետարան) եկեղեցու չափահաս ծխականները կիրակի, մայիսի 26-ին, ցեր. ժամը 11-ին հրաւիրված են ծխական ժողովի, որը զբաղվելու է հետեւեալ խնդիրներով.

1) Դպրոցի 1912/13 ուս. տարվայ նախահաշիւը։
2) Եկեղեցու 1313 թ. նախահաշիւը։
3) Վերստուգիչ յանձնաժ. զեկուցումը։
4) Ընթացիկ խնդիրներ։

Հոգաբարձութիւն

428. 1—1

ՀՈՆՕՐՐԷՒ (ՏՐԻՊՊԵՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ

**„SALO—ՊԻՉԻԼԻՆ“**

ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործածելու ձեռնարկը կցված է սրվակին։ Բոլոր դեղատներում [illegible], հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։

**Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր և թէ յարատև բնոյթ ունեցող դէպքերում և կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայամառ ընթացք։**

ՊԱՀԵՍՏ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.

Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախսը պատուիրատուի հաշւով։
Գտնվում է Կովկասեան Ընկերութեան Դեղային Ապրանքների պահեստներում։

(Դ.) 0—20

## ՕԳՏՎԵՑԷՔ ԴԻՊՔԻՑ

Վաճառվում են Յ. Դաղբաշեանի բառարանները

## ՎԵՐՋԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

ՌՈՒՍ-ՀԱՅ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ գինը 8 ր., կազմած 9 ր.։

ՀԱՅ-ՌՈՒՍ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌ., գինը 6 ր. կազմած 6 ր. 50 կ.։ Երկու բառարանները միասին 12 ր.։ Ճանապարհածախսը հեղինակի վրա։ Դիմել՝ А. Дагбашяну. Коргановская ул. № 9. кв. 2 Въ г. Тифлисъ.

ե. 2. 383. 10—4

### Հ Ր Ա Ւ Է Ր

Սրբազան առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի առաջադրութեան համաձայն մայիսի 13-ից, այս տարվայ, № 309, Թիֆլիսի Կաթուղիկէ ս. Աստուածածնի (Մէյդանի ս. Գէորգ) եկեղեցու պ. պ. ծխականները հրաւիրվում են յիշեալ եկեղեցի ամսիս 26-ին, կիրակի օր, ժամը 12-ին ընտրելու եկեղեցական հոգաբարձուներ և հաշւեքննիչներ։

Առանձին հրաւէրներ չեն լինի։

Գործակալ Ա. մասի Թիֆլիսի եկեղեց.
Սարգիս աւ.ք. Շիօյեան

(2.) 414. 2—2

Լոյս տեսաւ
ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

## ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Եւրօպական ձայնագրութեամբ, աշակերտների և ուսուցիչների համար։
Գինն է 25 կոպէկ։

Ստանալու համար դիմել հեղինակին՝ Анановское арм. женское училище, Учителю музыки и пѣнія А. М. Теръ-Осепянъ.

Ուսումնարաններին զեղչ 20%.

(ա.օ.) 420. 3—2

**ԳՈՅՔԵՐԸ ԿՐԱԿԻՑ ԱՊԱՀՈՎՈՂ ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ** յայտնում է ի տեղեկութիւն Ընկերութեան պ. պ. անդամների, որ կիրակի, մայիսի 26-ին ս. թ., առաւօտեան ժամը 11-ին, Քաղաքային Վարկային Ընկ. դահլիճում (Պուշկինսկայա փող. № 3) տեղի կունենայ

## ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ի տեղի մայիսի 5-ի չը կայացած ժողովի, քննութեան առնելու բոլոր այն հարցերը, որոնք նշանակված էին նախորդ ժողովում քննելու համար։ Միաժամանակ Վարչութիւնը պատիւ ունի յայտնելու պ. պ. անդամներին, որ Ընկերութեան կանօնադր. § 26-ի հիման վրա, մայիսի 26-ին նշանակված ժողովը կը համարվի օրինականապէս կայացած՝ ի նկատի չառնելով ներկայ անդամների քանակը։

2. 403. 2—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный